



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ա. ԿՐԱՎՁԵՆԿՈՒ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍԱՔՈՆ  
ԿԱՐՄԻՐ ԲԱՆՄԱԿԱՅԻՆ ԴԱՐՁԱՎ

Ս Ի Ն Չ Մ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐՈՎՁՈՒԹՅՈՒՆ

ՄՈՍԿՎԱ

1925

APM.  
2-181

891.71  
4-95

19 NOV 2010  
25 SEP 2008

№ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԳՊՐՈՑԻ ԳՐԱԾԱՐԳ 8

Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ

А. КРАВЧЕНКО.  
КАК САША СТАЛ КРАСНОАРМЕЙЦЕМ.  
НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ.

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍԱՔՈՆ  
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԴԱՐՁԱԿ

1902  
1902  
1902

Թարգ. Մ. ԲԱՐՅՈՒՆԻԱՐՅԱՆԻ



Центральное Издательство Народов Союза С. С. Р.  
Москва, Никольская, 10.

Օ Խ Հ Մ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒՔՅՈՒՆ  
ՎՈՍԿՎԱ 1925

Книга набрана и отпечатана в 3-й  
типографии Госиздата С. С. Р. Арме-  
нии. Москва, Армянский пер., 2.  
В количестве 5000 экземпляров.  
Главлит № 49703.

ԱՅՍ ԳՐԻՈՒՅԿ ԵՎԻՐՎՈՒՄ Ե  
1917 ԹՎԻ ՀՈՒՏԵՄԲԵՐԻՑ ՀԵՏՈ  
ԾՆՎԱԾ ԲՈԼՈՐ ՅԵՐԵՎԱՆԵՐԻՆ.

## 1. ՓՈՔՐԻԿ ՊԱՐԱՆԱԳՈՐԾԸ.

Կ. գետի բարձր ափին ցիր ու ցան ընկած է Ի. գյուղը: Անկարգ, խառն ի խուռն, դեպի բլուրներն ու ձորակները ցրիվ եկած խրճիթները կարծես փախչում են միմյանցից: Յերևում է, վոր այստեղ բնակութուն հաստատելիս, ամեն մեկը մտածել է միայն իր մասին:

Ջմեռ է: Չյունի դեզերը համարյա տակով են արել խրճիթները՝ կտրել իրարից: Յերբ յերեկոյան մութն ընկնում է, գյուղը բոլորովին կորչում է խավարի մեջ. յերբեմն-յերբեմն մի խրճիթում ճրագ է վառվում, մի քիչ վառվում է և ապա հանգչում:

Բայց ինչ կարիք կա խրճիթներում ճրագ վառելու: Համարյա բոլոր տղամարդիկ գերմանական պատերազմն են գնացել, տանը միայն ծերեր, կանայք և յերեխաներ են մնացել: Յերեկը տան գործերը տեսնելուց նրանք հոգնած են լինում և յերեկոյան աշխատում են հավերի հետ միաժամանակ պառկել քնելու: Միայն մի խրճիթում գրեթե ամբողջ գրչերը ճրագ է վառվում,

վոր շատ ուշ են հանգցնում և առավոտյան կանուխ վառում: Այդ խրճիթը հարուստ ռամիկ թաթոս Մանուչարյանի բակումն է: Ամբողջ շրջակա նահանգը նրան ճանաչում է: Նա գնում է գյուղացիների բերքը, իսկ ամենից շատ—կանեփ: Մանուչարյանը կանեփը հենց իր տանն էլ մշակում է, պարան վոլորում և քաղաքում լավ գնով ծախում:

Ինքը Մանուչարյանը պարան չի վոլորում. այդ աշխատանքի համար նա յերեք տղա ունի, անչափահաս տղաներ—8 մինչև 14 տարեկան: Ավելի մեծերին Մանուչարյանը չի սիրում. «նրանց հետ դալմադալը շատ է», իսկ այս փոքրիկները հնազանդ են, ինչ վոր նա ստիպում է, սուս ու փուս անում են:

Այդ յերեխաները աշխատում են և բնակվում յետեփի բակում գտնվող մի փոքրիկ սենյակում: Փոքրիկ պատուհանը հազիվ հազ լույս է ներս թողնում, իսկ առավոտյան և յերեկոյան մուր տարածող ճրագն է վառվում: Յերեխաների թոքերի համար շունչ քաշելը ծանր է, բայց այստեղ կանեփի թոզն էլ կա, վոր ամբողջ սենյակը լցրել է և զիշեր ցերեկ ամպի պես կանգնել: Առավոտյան վեց ժամից մինչև զիշերվա տասն ու մեկը փոքրիկ ձեռները կանեփ են գզում, վոլորում և թոկ շինում: Դուրս

գալ, թարմ ող ծծել, ազատ շունչ քաշել չի կարելի—յերեխաները շոր շունեն. պատտած ցնցոտիներն են մի կերպ ծածկում նրանց մարմինները: Մանուկների աչքերի բորբոքված կուպերն ուռած են ու փրուած, դեմքերը գունատ, մոմի պես դեղին, ձեռքերի վրա մինչև արմուշկը սարսափելի վերքեր. շարունակ լարված աշխատանքից ձեռքի կաշին ճաքճքում է, և կանեփի բարակ թելերը ու շորս կողմը տարածվող կեղևի մանրիկ կտորները ճաքած տեղերն ուտում են ու վերք գոյացնում:

Առավոտյան կանուխ յերեխաներին թեթև տաքացրած ջրով ու սև հացով են կերակրում, — և այդ նախաճաշիկ է կոչվում. կեսորին ճաշի համար պասուս ապուր են բերում, մեջը մի քանի կարտոֆիլ, իսկ յերեկոյան դարձյալ մի մի կտոր հաց: Ամեն մեկը իր հացի պատառը մի տեղ թագցնում է,—մի գուցե հետո ավելի քսողած լինեն: Մեկ էլ—նրանք մի կուշտ քնել են ուղում: Միայն զիշերվա ժամը 11-ին, բայց պատահում է և 12-ին է տերը հանգցնում մուր տարածող ճրագը: Դրանից հետո ցերեկվա աշխատանքից տանջված յերեխաները հենց այդտեղ պառկում են կանեփի վրա և քնում: Առավոտյան վաղ, յերբ տակավին մուլն է, Մանուչարյանը նրանց աշխատելու է վերկացնում:

Մանուչարյանը կնոջ ու վորդու հետ յերեք պայծառ, լույս սենյակներում ե բնակվում, ամեն որ միս ե ուտում, գյուղ գնալու համար յերկու ձի յե ձեռք բերել, յերկու չափ սիրուն ձի: Մանուչարյանը պատրաստվում ե ելի յերեսաններ վերցնել իրեն մոտ: Յերեսաներ շատ, ինչքան ուզում յես: Պատերազմում գյուղացիներին շատ են սպանվել, մնացել են մայրերը բազմաթիվ յերեսաների հետ, — ինչ անեն նրանց: Յեվ Մանուչարյանը «մեղքանալով» յերեսաներին վերցնում ե իրեն մոտ, ուտեցնում խմեցնում ե նրանց, իսկ յերբևմն ել բարխանում ե— և մի բան տալիս մորը: Հետո այդ կինը յերկար շնորհակալութուն ե անում, մինչև տիրոջ վտանները խոնարհվում:

Բոլոր յերեք տղաներից Սաքո Զաքարյանն ամենահանգիստն ե, ամենաաշխատասերը: Արդեն յերկրորդ տարին ե, վոր նա Մանուչարյանի մոտ նստած ե: Տանը նա վեցերորդն ե. ամենից մեծը 13 տարեկան ե: Տանը բոլորը փոքրեր են— ութը, յոթը, հինգ, յերեք տարեկան յեղբայրներ, իսկ ամենափոքրիկ Մարիամը միայն յերկու տարեկան ե, մայրն ել հիվանդ: Աշխատել մայրը չի կարող. նրա վոտ ու ձեռքը մի ինչ վոր ցավով բռնված են, իսկ յերբ գերմանացիք պատերազմում հորը սպանեցին, նրա

տունը քանդվեց, նա սկսեց մուրացկանութուն անել: Սկզբում մայրը Սաքոյին ել հետը մաներ ածում, բայց հետո Մանուչարյանը խղճաց, վերցրեց նրան:

— Բան արա, վորդի, աշխատիր,—ասաց մայրը, յերբ վորդին գնում եր, և լաց յեղավ:— Ել ուրիշ մարդ չկա, վոր մեր հոգսը քաշի:

Սաքոն լավ ե հիշում այդ խոսքերը և սուս ու փուս աշխատում ե, վորքան ուժ ունի:

«Մորս պետք ե ոգնել, նրա կյանքը թեթեվացնել.— մտածում եր նա,— յերբ հայրս կար, այդպես չեր»:

Սաքոն մտաբերում եր թե ինչպես ելին ապրում հոր ժամանակ: Հարուստ չեյին, բայց կուշտ եյին, հաց միշտ լինում եր, յերկու տարի առ ուսումնարան ել եր գնում: Այնտեղ պատկերներով գրքույկներ եյին տալիս նրանց, յերկրի մասին, կենդանիների մասին, յերկրի վրա ապրող զանազան մարդկանց մասին եյին պատմում: Այժմ ել Սաքոն ուզում ե մի բան կարգալ, բայց չի կարելի: Տիրոջ աչքը միշտ նրանց վրա յե. հենց վոր մի բան ե պատահում, իսկույն գողգողում ե, հիշոցներ թափում և խփում ե յերեսաներին ինչով ասես: Սաքոն միայն մի հույս ուներ, — վոր յերկրորդ յեղբայրը՝ Մանուկը կմեծանա, Մանուչարյանը նրան ել կվերցնի բան անելու,

այն ժամանակ հեշտ կլինի: Ելի միջերկու  
տաքի պետք ե համբերել:

Յերբեմն Սաքոյին մայրը այցելում եր: Սո-  
վորաբար նա մի անկյունում կանգնում եր և  
լաց լինում:

— Լղար ես, Սաքո ջան, ինչպես նվագ ես, չո-  
փի պես ես: Ինչի՞ց ե այդ, — չլինի՞ թե վատ են  
կերակրում:

— Չե, — սրտապնդվում եր Սաքոն, — լավ են  
կերակրում, եդ նրանից ե, վոր ողջ վատ ե,  
ծանր: Իսկ դու ինչպիս ես ապրում:

Յեվ մայրը սկսում եր իր քաղցած կյանքը  
պատմել:

— Հացի փշրունք, վորդիս, սկսել են քիչ  
տալ, ամենքն ել վատ են ապրում, ամեն ոք  
հաց չենք ուտում: Մեզ՝ մուրացկաններիս վրա  
սկսել են շներ բաց թողնել: Փոքրիկ Մարիա-  
մին փորը միշտ տանջում ե, գոնե շուտ մեռ-  
ներ, պրծներ:

Սաքոն լսում ե այդ բոլորը, վոր ծանր քա-  
րի պես ճնշում ե նրան, իսկ մայրը միալար լա-  
լիս ե ու լալիս:

— Մոտ ժամանակս քաղցից բոլորովին կմեռ-  
նեյինք, յեթե Թաթոս Մանուչարյանը մի փութ  
կարտոֆիլ չուղարկեր: Քիտ բախտիցն ե, — ասում  
ե, — խեղճ վողորմելի կլին, վոր վորդիդ հեզ ե և

աշխատասեր: Դե, Սաքո, դու լավ բան արա,  
այն ժամանակ բարերարը, կարող ե պատահել, Մա-  
նուկին ել կվերցնի:

Յեվ նիհար ու վտիտ յերեսի վրա դարձյալ  
արցունքներ են գլորվում, կուչ յեկած ձեռքով  
գլխի կեղտոս թաշկինակի ծայրերն ե քաշում:

— Յես լավ եմ բանում, մայրիկ, աշխատում  
եմ, — կամացուկ ասում ե Սաքոն:

Յերբ մայրը գնում ե, բոլոր յերեսաները,  
ինչպես միշտ, լուռ են: Բայ, Սաքոն խոսել ե  
ուզում, ուզում ե մեկն ու մեկից իմանալ, թե  
յերբեիցե այն գարձուրելի վորջից նա դուրս կգա  
թե վոչ:

Յեվ Սաքոն սկսում ե բարձրաձայն յերազներ  
տեսնել:

— Այ, Մանուկը կգա աշխատելու, իսկ յես  
տուն կվերադառնամ ելի կսկսեմ ուսումնարան  
գնալ:

— Ինչպես չե, — պաասախանում ե նրա հա-  
րևան փոքրիկ, գանգուր Մեխակը: Վոչ մի տեղ,  
Սաքո, դու չես գնալ, ամեն տեղ մարդ լափել ե  
ուզում, իսկ մենք լափելու բան չունենք, բացի  
նրանից, ինչ վոր մեր տերն ե տալիս:

— Դու ո՞ւր պիտի գնաս, — ասում ե Գևորգը,  
վոր 14 տարեկան մի տղա յեր և յերրորդ տա-  
րին եր, վոր Մանուչարյանի մոտ բան եր ա-

նում:—Այստեղից մենք գնալու մի տեղ ունենք—  
գերեզման: Ինչքա՞ն յերեխաներ մեռան այստեղ  
—Թորոսենց Մուկուչը, Սողոմոնենց Սարգիսը,  
Սահակինց Ստեփանը, բոլորին համբրել ել չի  
լինիլ: Տղեքը բանում են եստեղ՝ բանում, մեկ ել  
տեսար զլորվեցին: Գու ել շատ զարհուրելի ես  
դարձել—ամեն կողմից վոսկորներդ ցցված են:  
Շուտով, Սաքո, կմեռնես, սյ ինչ:

Սարսափում ե Սաքոն, լսում ե և արագ-ա-  
րագ կծուծը վոլորում:

Ել ուրիշ ի՞նչ անի:

Կարող եր պատահել, վոր Սաքոն հենց այդ  
գործի վրա մեռներ՝ գյուղական հարստի ոգտին  
աշխատելուց, բայց մի բախտավոր դեպք նրան  
վրկեց:

## 2. ԼՈՒՅՍԻ ՃԱՌԱԳԱՅՅՐԸ.

Մի կիրակի յերեկո, յերբ գյուղացիներն ար-  
գեն հավաքված եյին իրենց խրճիթներում, փոզո-  
ցում փոքրիկ զանգակների ձայն լսվեց: Մի մարդ  
եր գնում՝ սահաակին յ'ըլու ձի լծած:

Գյուղումը ո՞վ այդպես պիտի գնա:

«Յերևի եյի ուրյագնիկն ե յեկել զինվորա-  
ցուներ հավաքելու, բայց կարող ե լինել, վոր  
նոր հարկ են գրել պատերազմի պատճառով»,  
տխուր մտածում եյին գյուղացիները:

Բայց զանգակները զողանջեցին, զողանջե-  
ցին, հասան ուսումնարանի մոտ և լռեցին: Սահ-  
նակից մի ինչ վոր փաթաթված մարդկային  
կերպարանք դուրս յեկավ և ուսումնարան մը-  
տավ, իսկ նրա յետեվից մի ինչ վոր մեծ, սև  
արկղ ներս տարան:

Քառորդ ժամից հետո տանուտերը մի խըր-  
ճիթից մյուսն եր գնում, փոքրիկ պատուհան-  
ները թխթխկացնում և բղավում. «Ա՛յ տան  
տերեր, ուսումնարան գնացեք, Մեծ գեղիցը  
վարժուհի ե յեկել. մարդկանց կյանքի մասին ե  
պատմելու, պատկերներ ե ցույց տալու»:

Մերերն ու պառաջները հայհոյեցին:

— Սատանան ե բերում զրանց այստեղ, զբանք անելու բան չունե՞ն. ի՞նչ պատմելու բան կա: Ինքներս ել ամեն բան լավ գիտենք:

— Եղ տեսնվա՞ծ բան ե, վոր տանտերերին ասումնարան կանչեն: Դե ուսումնարանը յերեխաների գնալու տեղն ե, այդպես ե. իսկ մե՞զ ինչու համար են կանչում:

Բայց յերեխաները կենդանացան, շտապ-շտապ շորերն ու վտանամանները հագան և շուտ ամեն կողմից փոքրիկ լսմբերով դեպի ուսումնարան վազեցին: Նրանց մտիկ տալով՝ չափահասներից ել մի քանի հոգի գնացին:

Յերբ ուսուցչուհին յեկավ, Մանուշարյանի տղեքը արդեն քնած եյին: Տոն որերը նրանք միշտ այդպես եյին անցկացնում, համարյա բոլոր տոներին քնում եյին, յերբեմն մինչև անգամ չեյին վեր կենում հաց ուտելու: Յերեխաների ուժից վեր աշխատանքից տանջված մարմինները, սակավաթիվ տոն որերին հանգրստություն, քուն են պահանջում:

— Մի կուշտ քնել, — այս եր տոներին յերեխաների միակ ցանկությունը:

Տանուտերը նրանց պատուհանն ել թխթըխկացրեց: Սաքոն գարթնեց և ուսումնարան

խոսքը լսեց: Մի անգամից նա ցնցվեց, և նրա միտքը բոլորովին բորբոքվեց:

— Ինչպե՞ս ընկնեմ ուսումնարան:

Տան տերերը չկան, նրանք ամենքը Մեծ գյուղը հյուր են գնացել, շուտ չեն վերադառնա, ուսումնարան կարելի յե գնալ, բայց ինչո՞վ: Վոչ մի շոր չունի, վտաները բոբիկ են, իսկ մինչև ուսումնարանը բավական տեղ կա գնալու:

Սակայն Սաքոն շատ եր ուզում գնալ: Նայեց նա իր կողքին քնած յերեխաներին, հագավ պատուտած վարտիկը և կիսամերկ, փոթորկի պես, դեպի խոհանոցը սլացավ՝ կերակուր յեփող Զմրութ-բաջու մոտ:

— Զմրութ-բաջի, աղաղակեց նա, — տո՛ւր ինձ կուրտիկեղ և փափուջներդ:

— Ինչի՞ դե պետք, — զարմացավ Զմրութ-բաջին, — աղան հրամայել ե բակից դուրս չթողնել:

— Ուսումնարան եմ ուզում գնալ. լսում ես, այնտեղ պատկերներ են ցույց տալու:

— Պատկերներ, պատկերներ, — մըթմըթաց Զմրութ-բաջին. եսոր պատկերներ, իսկ վաղը քեզ քնից վեր կացնել չի լինի, պիտի շուտ աշխատանքի գնաս:

— Յես շուտ վեր կկենամ, Զմրութ-բաջի, — համոզում ե Սաքոն, — ի՛նքս վեր կկենամ, միայն թե շորդ տուր:

Մի քանի ըոպեյից հետո Սաքոն անազին  
 փափուջները, կանացի տաք կուրտկեն հա-  
 գած, վորի թևերը ճյուղի վրայից քարշ էյին  
 գալիս, դեպի ուսումնարան եր գնում: Ուրախու-  
 թյունից նրա սիրտը սաստիկ բաբախում եր:

«Իսկ աղերը հիմա քնած են,—անցավ նրա  
 գլխով այս միտքն իր ընկերների մասին.—ե՛հ,  
 թող քնեն իրենց համար»:

Յերր Սաքոն ուսումնարան յեկավ, ամենա-  
 մեծ սեսյակում լիքը ժողովուրդ եր. նստարան-  
 ների, պատուհանների, հատակի վրա էյին նըս-  
 տոտած, իսկ յետեվում—կանգնած էյին: Հավաք-  
 վածները արևածղկի սերմ էյին չոթացնում և  
 խոսում: Ամենքին—մեծ արկղն եր շատ հետա-  
 քրքրում, վորից հանեցին մի ուրիշ սև արկղ,  
 վորի կողքերին խողովակներ կային: Վարժուհին  
 ասաց, թե դա մոզական լապտեր ե, վոր պատ-  
 կերներ պիտի ցույց տա: Ապա պատից մի մեծ  
 կտավ կախեցին:

Սաքոյին այդ բոլորն այնպես եր հետաքրք-  
 րում, վոր նա սկսեց ճեղքելով առաջ գնալ-  
 այն ժամանակ միայն նա հանգստացավ, յերբ  
 հենց լապտերի մոտ կանգնեց և մինչև անգամ  
 շոշափեց նրան:

— Յերկաթից ե, — հասկացավ Սաքոն: — Եղ  
 ինչպե՞ս նա պատկերներ պիտի ցույց տա:

Դրա մասին Սաքոն ուզում եր վարժուհուն  
 հարցնել, բայց վարժուհին հենց այդ ժամանակ  
 ամենքին ասաց, թե պետք ե լռել, վորովհետև  
 սկսում ե պատմել և պատկերներ ցույց տալ:

Ամենքը լռեցին:

Վարժուհին սկսեց պատմել, թե միշտ ել մար-  
 գիկ այնպես չեն յեղել, ինչպես այժմ են, միշտ  
 ել այնպես չեն ապրել, ինչպես մեր որերում:  
 Նրանց նախկին կյանքը սարսափելի և անհրա-  
 պույր ե յեղել, զազանների կյանքից քիչ բա-  
 նով ե տարբերվել:

Յեվ մեկը մյուսից հետո գու՛յնզգու՛յն մեծ  
 պատկերներ անցան նախնական մարդկանց կյան-  
 քից:

Ահա նրանք—նիհար են, գզգզված, կոպիտ  
 տաշած քարերով և փայտե նետերով գնում են  
 վայրենի անազին զազաններ վորսալու:

Քանի՞սը նրանցից կկորչի...

Ահա նրանց բնակարանները. զրանք փորրիկ  
 ծակեր են քարափներում կամ թե ծառերի ճյու-  
 ղերի միջև մեծ բույնի պես մի բան: Վ. ըոսից,  
 կայծակից մարդիկ վախենում են և յերկրպա-  
 գում զրանց:

Տարիները տարիների յետևից, դարերը դա-  
 րերի յետեվից անցնում են և մարդկանց կյան-  
 քը փոխվում ե...

Սաքոն հիացած ահանջ ե գնում: Կտավից, վարժուհուց, նա աչքը չի պոկում, ամեն մի խոսքը կլանում ե:

Բայց ահա վարժուհին վերջացրեց պատմելը: Նա ընդհատեց իր խոսքն այն մասին, թե ինչպես մարդիկ տիրեցին կրակին, յերկաթին, և ինչպես սկսեցին մեծ պետություններ կազմել: Հին պետությունների մարդկանց կյանքի մասին ուսուցչուհին խոստացավ հետևյալ անգամ պատմել մի շաբաթից հետո, և հարցրեց, արդյո՞ք կզան լսելու:

— Կգա՛նք, կգա՛նք, — պոռացին ձայները:

Սաքոն աշխատում եր ամենից բարձր բղավել:

Հետո ուսուցչուհին սկսեց լապտերը հավաքել: Ամենքը նրան շրջապատեցին, սկսեցին ոգնել, հարց ու փորձ անել, թե ի՞նչպես ե լինում, վոր լապտերը այդ փոքրիկ պատկերները այնպես խոշոր ե ցույց տալիս:

Դարձյալ Սաքոն ամենից շատ եր անհանգրստանում, ինքն եր ուզում լապտերի արկղը տալ, սակայն Զմրութ-բաշու կուրտկի յերկայն թևերը չեյին թողնում, վոր նա ձեռքերը հանի նրանց միջից, իսկ ահագին փափուջներում նա վոտները շատ դանդաղ եր շարժում:

Նորից գյուղի փողոցներում զոզանջեցին գանգակները, և ուսուցչուհին գնաց:

Խոսելով և խաղալով, յերեխաները իրենց տները ցրվեցին: Սաքոն ել տուն գնաց:

Նա ուզում եր տեսածն ու լսածը մեկն ու մեկին պատմել, իր տպավորություններին հաղորդակից անել, բայց ամենքը խոր քնած եյին յերբ նա արհեստանոցի դռնով ներս սողաց:

Սաքոն հանեց կուրտկան ու փափուջները, խնամքով սեղանի վրա դրեց, իսկ ինքը կանեփի վրա անկյունում կծկվեց:

Մեխակը և Գևորգը հանգիստ խումփում են, իսկ Սաքոյի աչքի առաջ շարունակ պատկերներն են կանգնած, մտաբերում ե մարդկանց առհելի կոիվը բնության հետ: Սաքոն խզում ե այն վայրենի, տգետ մարդկանց. ծանր եր նրանց կյանքը:

Իսկ այժմ միթե թեթև ե: Յեվ Սաքոն ալամա համեմատեց նախնական մարդկանց քարանձավը իր նեղ, աղտոտ սենյակի հետ, ուր պառկած եր, և տերևներից շինած վորջը—կանեփի դեզի հետ:

«Պետք ե քնել, — մտածում ե նա, շուտ պետք ե քնել, թե չե վաղը վատ կբանեմ, աղան կբարկանա, ել մյուս անգամ ուսումնարան գնալ չեմ կարող»:

Բայց մտքերը շարունակ թռչում են ու թռչում, հանգստություն չեն տալիս նրան:

«Վատ կյանք ե յեղել այն ժամանակ: Այժմ ել նա վատե, բայց և այնպես՝ վո՛չ ամենքի համար: Այ, մեր ազան ինչպիս ե պարում, նրա պարուստը ամենին նման չե նախնական կյանքին: Բայց ինքը Սաքոն վատ ե պարում»:

«Ինչո՞ւ ե այդպես: Դրա մասին վարժուհուն պետք ե հարցնել, նա, յերևի, գիտի: Մեկ ել նա յե՞րբ պիտի գա: Գոնե շուտ գար»:

Այդպես ել Սաքոն այդ գիշեր քնեց՝ գլխում մի շարք տազնապալից հարցեր ունենալով, շատ իմանալու բունն ծարավով, լավ որեր տեսնելու կարոտով:

### 3. ԴԵՊԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ.

Անցավ մի շաբաթ:

Այդ որերը Սաքոյի համար յերկար, շատ յերկար եյին:

Յե՛վ շարունակ միևնույն միտքն եր նրան անհանգստացնում. վարժուհին կգա՞, թե չի գա:

Նա փորձեց խոսակցություն սկսել իր ընկերների հետ անցյալ կիրակի որվա մասին, փորձեց պատմել նրանց բոլորը, ինչ վոր իմացել եր, բայց նրանք անուշաղիք եյին լսում, դաժան լուրթյուն եյին պահպանում:

— Ինչի՞ յե հարկավոր այդ բոլորը, — հարցրեց Միհրանը:

Իսկ մռայլ Գևորգն ավելացրեց.

— Թե մեր ազան գնալդ կիմանա, փոկով քեզ մի լավ կթակի, են՝ ժամանակ այդ պատմությունները լավ միտդ կպահես:

Սաքոն լռեց:

Կիրակի որը վաղ առավոտից տղան չկարողացավ քնել. նա անհանգստանում եր և վրդովվում.

«Նրանք» կգնան թե վոչ: Զմրութ-բաջին շոր կտա՞:

Ամեն բան այնպես յեղավ, վոր ավելի լավը հարկավոր չեր: Աղան ու խանուսը հյուր գնացին: Չմրութ-բաշին մի ինչ վոր ցնցոտի տվեց, և յերեկոյան Սաքոն՝ ուրախությունից փայլուն դեմքով, կանացի մեծ շալով փաթաթված, հենց լապտերի մոտ եր կանգնել և կտավից աչքը չեր պոկում:

«Արի դու տես աշխարհիս բաները, մտածում եր նա պատկերներին նայելով:—Մարդիկ հաղթել են վայրենի գազաններին, ստիպել են, վոր կրակը իրենց ծառայի, իսկ իրենք միմյանց հետ պատերազմում են. մի քանիսները տերեր են դարձել, մյուսները ճորտեր: Յե՛վ ճորտերի վուկորների վրա առաջին քաղաքներն են շինված...»

Սաքոն պատկերներից աչքը վարժուհու վրա գցեց, շատ բան ե ուզում նրանից հարցնել, բայց չի կարողանում, հարմար խոսքեր չունի:

Վարժուհին ել. նրան ե նայում ու ծիծաղում. «Ա՛յ տղա, եդ ի՞նչ ես աչքերդ ինձ վրա չոնել, հետաքրքիր ե»:

Սաքոն բոլորովին վախեցավ: Նա անհանգիստ շարժվեց, շալի տակից մերկ ձեռները դուրս ընկան, և լապտերի պայծառ լույսը նրան սարսափելի վերքերը լուսավորեցին:

— Եդ ի՞նչ ե ձեռներդ վրա, — անհանգիստ հարցրեց ուսուցչուհին:

Տղան կարծես թե համբացավ: Նա գլուխը կախ արավ, վոր գլորվող արտասուքը ծածկի, և շտապ-շտապ սկսեց ձեռքերը թագցնել:

— Մանուչարյանի տղան ե, — ասաց մեկը:

— Եդ՝ աշխատանքից ե, — լավեցին զանազան ձայներ:

Յե՛վ գյուղացիները մեկը մյուսից հետո սկսեցին պատմել ուսուցչուհուն Սաքոյի կյանքի մասին: Սաքոն և լուսմ եր, և չեր լուսմ, թե ինչ են ասում: Մեկը թեթևակի նրա մեջքը հրեց:

— Ա՛յ տղա, շուտ տուն վազիր, ժամանակ ե, չլինի թե աղադ քեզ բռնի, բանդ վաս կլինի: Սաքոն հնազանդ գնաց: Գնալիս նա յերեսը շուռ տվեց և վարժուհու գորովալից տխուր հայացքը նկատեց:

Յերեսան ուզեց յետ դառնալ, նրա մոտ վազել, մի ինչ վոր պաշտպանության մասին խնդրել նրանից: Չե՛ վոր ուսուցչուհին շատ բան զիտե, չե՛ վոր նա պետք ե իմանա, թե վորքան վատ ե Սաքոյի դրությունը, սակայն ամբոխը իրար անցավ, վարժուհին հեռու տեղ մնաց, և Սաքոն, չուզե՛նալով, գնաց դեպի Մանուչարյանի տունը:

Յերկուշաբթի որը ըստ սովորականին անցավ, իսկ յերեքշաբթի փորձանք պատահեց:

Գործի ժամանակ Սաքոն քնեց:

Յերկարատև անքնությունից նվազած մկանունքները կենսադուրկ կախ ընկան, ուղեղը մթազնեց: Յեզ վորքան ել ընկերները նրան դրդում հրում եյին, նա չեր կարողանում գործը շարունակել:

Յեզ հենց այդ ժամանակ աղան ներս մտավ: Նա մոտեցավ հոգնածությունից վայր ընկած տղային և վոտով նրա կողրին խփեց.

— Վե՛ր կաց, շան լակոտ: Զըի՞ յեմ քեզ կերակրում:

Սաքոն փորձեց վեր կենալ, բայց վոտները յերերվում եյին, չեյին բռնում, աչքերի առաջ սև սև բծեր եյին սահում:

Մանուշարյանն ավելի ևս գայրացավ:

— Վոտներիդ վրա, քոսո՛տ, կանգնել չես կարողանում, իսկ գիշերները ուսումնարանում կանգնել կարո՞ղ ես:— Յեզ կոպիտ ուսմկի ծանր ապտակը կսլալ նրա յերեսին:

Սաքոյի գլխում մի սուր միտք անցավ. ուսումնարանի մասին աղան իմացել է, այժմ ամեն բան կորավ, ել չի կարող գնալ լսելու: Վիշտը նրա սիրտը ճմլեց, և սաստիկ լաց յեղավ:

— Դեռ լաց ե՛լ ես լինում, — րդավեց Մանուշարյանը, և անսպառախ յերեխայի վրա հարվածներ թափվեցին:

Սաքոն ուշաթափ ընկավ:

Թե ինչ յեղավ հետո, նա չի հիշում: Յերբ ուշքի յեկավ, յերկար ժամանակ անշարժ պառկած եր: Սարսափելի եր: Հետո նա կամաց կամաց շարժվեց ու տնքաց: Ամբողջ մարմինը սաստիկ ցավում եր:

Գևորգն ու Մեխակը մոտեցան նրան.

— Դեռ կենդանի՞ յես, — հարցրեց Գևորգը: —

Մենք կարծում եյինք, թե արդեն հոգիդ փչել ես: Մեխակը մի կտոր հաց մեկնեց նրան:

— Հաց կեր, գուցե մի քիչ ցավդ թեթևանա:

Սաքոն հացին ձեռ չտվեց, Նորից նրա աչքերը խփվեցին, և նա ծանր քնի մեջ խորասուղվեց: Հետևյալ որը առավոտյան տղեքը նրան զարթեցրին.

— Վե՛ր կադ, Սաքո, մի բան կեր, — խնդրում եր վախեցած Մեխակը:

— Գոնե մի քիչ բան արա, — խրատում եր նրան Գևորգը, — աղան գուցե կնեւրի:

Սաքոն գոռով վեր կացավ և լուռ ու մունջ սկսեց կծուծը վոլորել: Նա վոչ մի բանի մասին չեր մտածում. ծանրացած գլուխը ներքև եր խոնարհվում:

Յեկավ Մանուշարյանը:

Նա նայեց ծեծված յերեխային և չարագուշակ սաց.

— Տես հան, լավ բանիր, թե չե բոլոր վոտ-  
կորներդ կջարդեմ: Գնա ռեխդ ել ձյունով մի  
լավ մաքրիր:

Այդ շաբաթն ել անցավ:

Կիրակի որը Սաքոն մի քունջ մտավ և բոր-  
բոքված աչքերը լայն բացած՝ կեղտոտ արհես-  
տանոցի կիսախավարին եր նայում:

Նիհար, կապույտներով ծածկված դեմքի  
վրա այդ մոխրագույն աչքերը տղայի մարմնի  
վերջին կենդանի կայծն եյին թվում:

Ինչի մասին եր նա մտածում:

«Ուսումնարան, ուսումնարան» — սլտովում եր  
նրա ուղեղում: Այդ փոքրիկ ուսումնարանը  
նրան մի մեծ, լուսավոր բան եր թվում:

Բայց հենց այդտեղ ել նրա աչքի առաջ Մա-  
նուչարյանի անագին, ծանր կերպարանքն եր  
ցցվում, նա զգում եր նրա հարվածները և կուչ  
գալիս:

Մթնեց: Գևորգն ու Մեխակը, ինչպես  
միշտ, քնած եյին. դուրսը խաղաղ եր:

Բայց ահա, մի տեղից, սկզբում հեռու, իսկ  
ապա ավելի և ավելի մոտ, գանգակները զողան-  
ջեցին:

Վարժուհին:

Սաքոն վեր թռավ, վրան քաշեց քնած Գե-  
վորգի բլուզը, բորբիկ վոտքերը կոխեց Մեխակի

պատուած, թաղիքե վոտնամանների մեջ և խու-  
ճասով դեպի ուսումնարան վազեց:

Այդ կիրակի ուսուցչուհին մենակ չեր վերա-  
դառնում Մեծ գյուղը — սահնակում նրա կողքին  
նստել եր Սաքոն:

— Այ տղա, յես ի՞նչ պիտի անեմ քեզ հետ, —  
մտախոհ ասում եր ուսուցչուհին, մուշտակում  
նրան փաթաթելով: — Ն՛հ, մի բան կմտածենք,  
հո եստեղ կորչելու չե՛ս:

— Յե՛վ կկորչի, կկորչի, — աղմկալից պա-  
տասխանեց ամբոխը: — Նա, Մանչուրյանը շատ  
յերեխաներ ե կն աշխարհը ուղարկել:

— Իսկ դուք ի՞նչ եք մտածում, — հարցրեց  
ուսուցչուհին:

— Մենք ի՞նչ կարող ենք անել, — լավեցին  
զանազան ձայներ: — Մեր կյանքն ել ե նրա ձեռքը:

Մի քանի բուսեյից հետո գյուղը վերջին ան-  
գամ իր ազոտ ճրագներով յերևաց և անհայտա-  
ցավ:

Ի՞նչ ապագա յե սպավսում Սաքոյին:

#### 4. ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ.

Առավոտ ե: Արեգակի ճառագայթները վարդազույն լույս են արձում Մեծ գյուղի ձյունապատ ամայի փողոցների վրա: Յեղբւնք միայն մի շուն ե վագում, բակի դռան տակից ներս սողում, և դարձյալ վոչ վոք չկա:

Ծխնելույղներից ուղիղ սյուներով ծուխը վեր ե բարձրանում, ամեն մի խրճիթում կանայք վխտում են՝ մի հասարակ կերակւր պատրաստելու համար:

Առանձին առանձին՝ ամենքը միևնույն բանն են անում:

Գդակը աչքերի վրա քաշած՝ Սաքոն կայտառ գնում ե խոր ձյունի միջով: Նուրբ, սառած ձյունը ուրախ-ուրախ դրոճում ե վտտի տակ, և յուր փայլուն շողերի խաղով մարդու աչք ե կուրացնում:

— Տես, թե մի գիշեր ինչքան ձյուն ե յեկել:

Սաքոն հեռու տեղ պիտի գնա: Նրա ձեռին ցրիչի գիրքն ե՝ մեջը ծրարներ, և այդ ծրարները նա պիտի յանձնե փոստին:

Արգեն յերեք ամիս ե, վոր նա Մեծ գյուղումն ե բնակվում: Նա աշխատանք ե անում—անտառապետի մոտ նա նամակներ բաժանող ե: Առաջվան հետ համեմատած այդ գործը խաղալիք ե: Կես որ պիտի ման գա Մեծ գյուղում ծրարներով, — ահա նրա ամբողջ գործը: Պետք ե միայն նայել, վոր ծրարները չկորչեն, յուրաքանչյուրին հանձնել նրա պատկանածը:

Այդ պաշտոնը ուսուցչուհին եր ճարել նրա համար: Անտառապետը առաջուց փող ավեց, Սաքոն իրեն համար անհրաժեշտ հագուստ ձեռք բերեց, և հանձնարարություններով դես ու դեն վագելը նա ավելի լավ եր համարում: Յրտին միայն մի բան ե նրան անհանգստացնում— ձեռքերը:

Նրանց բժշկելն ել հեշտ չի: Ամեն որ Սաքոն գնում ե բժշկի ոգնականի մոտ, վորը ցավոտ տեղերին մի ի՛նչ վոր դեղ ե քսում, բայց կեղտից բորբոքված կաշին շուտ չի առողջանում:

Անտառապետի մոտ Սաքոն մտով և յուղով կերակուր ե ուտում: Տղայի յերեսը կլորացել ե, այտերը կարմիր են, աչքերը ցուրբից խայտում են:

Ման ե գալիս Սաքոն, չորս կողմն ե նայում:

Ահա Բարսեղ Նաբաթյանի մեծ խրճիթն ե կանգնած: Դուրսը կատաղի ցուրտ ե, իսկ խըր-

ճիթի բոլոր լուսամուտները և դռները բոլորովին բաց են:

Եղ ի՞նչ է նշանակում:

Խրճիթի տերը սենյակը սառեցնում է, վոր ականջմտուկները, բոլոճները կոտորվեն,—զլխի է ընկսում Սաքոն: Յերևի հզ միջատները հոգի յես հանում, ել համբերութուն չի մնացել, վոր տերերը խրճիթից գնացել են և ցուրտը ներս թողել—ականջմտուկները կ'լուտորվին:

Սաքոն մտաբերում է, թե ինչպես Պետրոս քեռու ականջը մի ականջմտուկ եր մտել, մյուս ուրը բժշկի ոգնականը հանեց, իսկ մորաքրոջ քթումն ել մի մեծ բոլոճ կար:

Այդպես է գյուղական կյանքը. մարդիկ բոլոճներից տանջվում են:

Ահա Փինաչյանի տունը: Լավ տուն է, մեծ և զեղեցիկ: Այստեղ է բնակվում գյուղի խառնութպանը, Մանուչարյանի բարեկամը:

Յեվ յերբ Սաքոն յիշում է իր նախկին տիրոջը, կուչ է գալիս, սկսում է ավելի արագ քայլել:

Յերբ Սաքոն սկսեց ծառայել իբրև նամակներ տանող, Մանուչարյանը անտառապետի մոտ յեկավ, պահանջեց, վոր նախկին բանվորը նրա մոտ վերադառնա:

— Նրա մորը յես ենքան բան եմ տվել, վոր

յեթե այս անպիտանը ամբողջ կյանքը բան անի, դարձյալ պարտքի տակից դուրս չի գալ,—ասում եր նա:

Հետո յերբ տեսավ, վոր անտառապետը սղային հետ տալ նրան չի ուզում, սկսեց սպառնալ.

— Գնամ գանգատ կանեմ, վոր այդ սղան ինձից փախել է, իսկ դուք՝ թագցնում եք նրան...

Անտառապետը միայն ուսերը վեր քաշեց.

— Գանգատ սվեք, ձեր գործն է: Դատարանին կարելի յե պատմել, թե յերեխան ձեզ մոտ ինչպես է տանջվել:

Դրանից հետո Սաքոն շատ վախեցավ, մի քանի ուր մինչև անգամ յերկյուղ եր կրում փողոց դուրս գալ:

«Տես,—մտածում է Սաքոն,— Փինաչյանը ի՞նչ մեծ տուն է շինել իր համար»:

«Ամբողջ գյուղի աղջկերանց և կանանց հավաքում է փետուրներ պլոկելու և զրոշներ է վճարում նրանց դրա համար: Կանայք ու աղջկերբ հալից ընկնում են, իսկ Փինաչյանը—շահվում: Թե Մանուչարյանը, թե Փինաչյանը—մի և նույն բարի պտուղներն են»:

Ահա և ուսումնարանը: Սաքոն ամբողջովին ժպտում եր: Այժմ յերեկոները նա ուսումնարան

ե գնում. ցանկացողների հետ այնտեղ պարապում են:

Սաքոն յեռանդով ե սովորում, ուզում ե շատ բան իմանալ:

Առաջ ամեն ինչ հասկանալի, պարզ եր, բայց յերբ Սաքոն սկսեց զրքեր կարդալ, հարցերին ել վերջ չկար:

Որինակի համար՝ յերկիրքը: Սաքոն առաջ գիտեր, վոր յերկիրքը մի մեծ կապույտ վրան եր քեր զլսին, թվո մ եր, թե նա վերևում ամուր ե և հաստատուն, ինչպես տանիքը տան վրա: Իսկ յերբ սկսեց ուսումնարան զնալ, նա իմացավ, վոր առանձին վոչ մի յերկիրք չկա, այլ յերկիրը ողով ե շրջապատված, և այդ ողն ե հեռու տարածության վրա կապույտ և հաստատուն յերեվում:

Ամենից շատ Սաքոյին յերկիրքն ու ասողերը հետաքրքրեցին: Նա հավաքեց նրանց վերաբերյալ գանազան գրքուկներ և կարդում եր:

Նա յերկու ընկեր ունի. Ռոնիկ Լազյանը և Վահան Լազյանը: Իրանք ել նրա պես սիրում են այդ տեսակ գրքեր: Նրանք հավաքվում են միատեղ, կարդում են և զրույց անում:

— Մարդ թույլ մի ասողի վրա, տեսներ թե ի՞նչ կա այնտեղ:

Արդյոք կարո՞ղ են մարդիկ այդ բանին հասնել:

Տվաները յերկար զրից են անում, իսկ յերեկոյան նրանց սիրած բավականությունն ասողալից յերկնքին նայելն ե: Շատ գեղեցիկ ե:

Յերկնքի խավար, խավար խորքն ե. և կարծես անթիվ աշխարհների կենդանի կրակներ են այդ ասողերը:

Այդպիսի ըոպեններին Սաքոն մոռանում եր իր նախկին կյանքը Մանուչարյանի մոտ, այժմյանը նրանից շատ հեռու յեր թվում, և միշտ այս ցանկությամբ եր այրվում.—

«Սովորել, սովորել, սովորել»...

Յերբ Սաքոն տուն վերադարձավ, խոհանոցում մայրն եր նստած:

Մանուչարյանից հեռանալուց հետո արդեն մի քանի անգամ եր նա յեկել, խնդրում եր վերադառնա: Սաքոյի նոր կյանքը վախեցնում եր նրան.

«Իսկ յեթե հանկարծ անտառապետը պաշտոնով տեղափոխվի: Մանուչարյանի մոտ տեղը ավելի հաստատ ե»:

Սաքոն ականջ չդրեց:

Մայրը կծկված, կուչ յեկած, ցնցոտիներով նստել եր մի անկյունում. յերբ վորդուն տեսավ, ինչպես և միշտ, լաց յեղավ:

— Ի՞նչու յես լալիս, մայրիկ ջան,—կամաց հարցրեց Սաքոն:

—Վորդիս, մեռնում ենք,—հառաչեց մայրը,— արդեն յերրորդ որն ե, վոր առանց հացի յենք նստել: Մարիամը վոտի վրա կանգնել չի կարողանում: Մանուկին Մանուչարյանի մոտ տարա, Մանուչարյանը նրան չի վերցնում, հայհոյում ե, բարկացած ե, վոր դու նրանից հեռացար: Մի մի կտոր հաց մուրալու ել ուժ չկա, վոտներս չեն տանում:

Հեծկլտանքից պառավի բուկը բռնվեց:

Սաքոն շմածի պես եր կանգնել:

Ա՛յ քեզ և գրքեր... Ա՛յ քեզ և ուսում...

Սաքոյի դրությունը լավացավ, բայց մայրը և մյուս յերեխաները սովից մեռնում են:

— Ի՞նչ անեմ, վորդի,—լսում ե Սաքոն մոր աղերսագին ձայնը:

— Կգնամ անտառապետի մոտ, կինդրեմ վոր առաջուց փող տա,—ասում ե Սաքոն,—կարող ե պատահել վոր տա:

Անտառապետի դիվանատունը լի յե մարդկանցով: Բոլոր գյուղերից գյուղացիներ են յեկել. մեկն ուզում ե տուն շինելու գերաններ գնել, մյուսը վառելու համար չոր ճյուղեր ե ուզում, յերրորդը յեկել ե անտառապետից գործ խընդրելու:

Կ. գետի մոտ անտառները պատի պես են կանգնած, բայց վոչ վոր մի ճյուղ ել չի կարող վերցնել առանց թուլավության:

«Պետական անտառ ե»,—շարունակ լսում ե Սաքոն: Պատահում են և այնպիսի գյուղացիներ, վոր անվերջ սակարկություն են անում անտառապետի հետ, լաց են լինում, ուղղակի չոգում են նրա առաջ:

— Խնդրում ենք, բարի յեղիր, գինը մի քիչ պակսեցրու,—իսկ անտառապետը մերժում ե, միշտ պես պես որենքների վրա յե հենվում: Յերեվում ե, վոր մի խիտ մարդ ե զրել այդ որենքները. աղբատ մարդկանց այդ որենքները բոլորովին չեն խղճում:

Դռան մեջ կանգնել ե տղան և սպասում, թե յերբ կարելի կլինի մոտենալ իր տիրոջը:

Նա կանգնած ե, իսկ գլխում զանազան մտքեր հանգիստ չեն տալիս:

— Ի՞նչ անեմ, վորդի,—հնչում ե նրա ականջներում մոր ձայնը:

«Ի՞նչ անել,—մտածում ե նա:—Ինչ պետք ե անել, վոր մոր դրությունը թեթևանա: Բայց միթե միայն նրա դրությունն ե ծանր: Եստեղ ել են տանջվում, խնդրում, աղաչում, պաղատում: Սակայն զրքույկներում վոչինչ չի զբած, թե ինչպես պետք ե ավելի լավ ապրել... յերկինք,

աստղեր, վայրենի մարդիկ—դրանց մասին կար-  
դալը հետաքրքրական է. աշխարհի մասին շատ  
բան եմ ուզում իմանալ... Ինչքան էլ այդպիսի  
գրքեր կարդամ, դրանից մորս վիճակը չի լա-  
վանա: Մի՞թե միշտ այդպես է լինելու».

### 5. ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻՆ

Մոտավորապես ելի մի յերկու ամիս ան-  
ցավ: Արևի ճառագաթները ավելի ջիւրմայան,  
վերևից ձյունը սկսեց ցերեկը հալել, իսկ իրիկ-  
նապահին հարթ ու հավասար սառցե կեղևով  
ծածկվել: Լուսնիկա յերեկոներին գյուղի յերեսա-  
սները շատ ելին սիրում վազվզել այդ սառուցի  
վրա: Ձեռներին մի մի յերկար ձող բռնած՝ բար-  
ձր ձնակույտերից նրանք ցած ելին սլանում, իսկ  
յետևից նրանց յերկար շվաքներն ելին վազում:  
Յերեմն պատահում էր, վոր մեկը ուժգին ձյու-  
նի մեջ էր գլորվում և այդ ժամանակ մաքուր  
ողում յերկար հնչում էր նրանց ուրախ ու զը-  
վարթ քրքիջը: Յերեսաների հետ Սաքոն էլ  
պարապմունքից հետո վազվզում էր: Այդ ժա-  
մանակամիջոցում նա կազդուրվել էր, մեծա-  
ցել:

«Ինչո՞ւ մարդկանց մի մասը կուշտ է, լի-  
ուշի, հեշտ է ապրում, իսկ մյուս մասը սոված  
է, աշխատելուց հողին դուրս է գալիս: Ի՞նչ  
պետք է անել, վոր աղքատ մարդիկն էլ լավ  
ապրեն»:

Այս մտքերը շատ ամուր եյին նստած Սաքոյի գլխում և նա նրանց չէր մոռանում:

Մի որ Սաքոն ուսուցչուհուն խնդրեց, վոր դրա մասին գրքեր տա կարդալու: Հո այդպիսի գրքեր պէ՛տք է վոր լինեն:

Վարժուհին ուշի ուշով նայեց նրան և ասաց.

— Քեզ համար այդպիսի գրքեր չկան: Ուզում ես այդ ամենը հասկանալ, լավ սովորիր, կմեծանաս, կխելոքանաս, այն ժամանակ առանց գրքերի ել կհասկանաս, թե բանը ինչու՞մ է:

Այդ որից Սաքոն սկսեց ավելի ջանասիրությամբ պարապել ուսումնարանում: Սովորում է և միշտ մտածում.

«Արդյոք յես շո՞ւտ կխելոքանամ և շո՞ւտ կսկսեմ հասկանալ, ինչ վոր հարկավոր է: Սովորելու այլևս վո՞րքան ժամանակ է մնացել»:

Սաքոն պատրաստվում էր յերկար ժամանակ ուսումնարան գնալ, բայց բանը ուրիշ կերպ դուրս յեկավ:

Մի անգամ Սաքոն գրքերը թաշկինակի մեջ կապեց, վերցրեց թանաքամանը և գնաց պարապելու: Մեկ ել ինչ տեսնի: Անթիվ-անհամար մարդիք են գնում դեպի ուսումնարան, թե ծեր գյուղացիներ, թե կանայք, թե աղջկերք:

«Այս ի՞նչ հրաշք է,—մտածեց Սաքոն,—եղ ինչո՞ւ համար են նրանք գնում: Զլինի՞ թե ու-

սումնարանում մի վորևէ ընթերցանություն կա, բայց ընթերցանությունների ժամանակ ել նրանք այդքան շատ չեյին գալիս»:

Այնքան ժողովուրդ էր հավաքվել ուսումնարանում, վոր ասեղ գցելու տեղ չկար, շունչ քաշելը դժվար էր: Նստարանները հավաքել էյին, և ամենամեծ սենյակում ժողովուրդը ուս ուսի տված էր կանգնել: Վարժուհին ել այստեղ է, նայում է խոնվող գյուղացիներին, բայց մոզական լապտերը չի յերևում:

Հստ իր սովորության Սաքոն ճեղքելով առաջ գնաց. տեսնում է, վոր ամենքի դեմքերը յերկչոտ են և հուզված:

Ուսուցչուհին ամբիոն բարձրացավ և ասաց.

— Քաղաքացիներ:

Սաքոն մինչև անգամ բերանը բաց արավ. այս ինչ խոսք է. առաջ յերբեք այդ խոսքը չեյին լսել: Իսկ ուսուցչուհին շարունակում է.

— Ռուսաստանում,—ասում է նա,—հեղափոխություն է... «Այս ինչ բան է»,—մտածում է Սաքոն:

— Պետրոգրադի բանվորները ստիպել են թագավորին, վոր դահից հրաժարվի:

Հենց վոր վարժուհին ասաց այդ, ժողովուրդը, ինչպես անտառը մրրկի ժամանակ, աղմուկ հանեց: Թե ինչու յե նա աղմուկ հանում, դժ-

վար ե վորոշել: Մի քանի պառավ լաց յեղան և սկսեցին յերեսները խաչակնքել, իսկ Դանիել Կորկոտայնը, վորին ամենքը ճանաչում էին ինչպես հարբեցողի, բարձրաձայն գոչեց.

— Վաղո՛ւց ժամանակ եր:

— Արդյոք ձեզ համար այդ լավ ե թե վատ, — հարցրեց ուսուցչուհին: Յեվ մի անգամից ամենքը խաղաղվեցին ու ավելի մոտեցան իրար:

— Թագավորը և նրա մինիստրները ձեզանից ահագին հարկեր էին վերցնում. ինչ վոր դուք ձեր մեջըով աշխատում էիք, նրանք իրենց գրպանն էին լցնում. ձեր վորդկերանց պատերազմ էին ուղարկում՝ իրենց շահերի համար մեռնելու: Ձեր իսկ փողով վոստիկանություն, ուրիազնիկներ, պրիստաֆներ էին պահում, վորոնք ձեզ շունչ քաշել չէին տալիս, նեղում, կեղեքում էին, իսկ յեթե մի բան մի քիչ նրանց ասածով չեր լինում, — ձեզ բանտ էին նստեցնում, մըտրակով ձեծում, ձեր կաշին քերթում:

Ուսուցչուհին յերկար պատմեց այն ճնշումների մասին, վորոնց յենթարկում եր թագավորը ժողովրդին, և Սաքոն մտածեց. «եզ թագավորը Մանուչարյանի պես մի բան ե, միայն թե Մանուչարյանը իր ոգտի համար վորք յերեսխաներին ե տանջում, իսկ թագավորը — ամբողջ ժողովրդին»:

Սաքոն այդ հասկացավ, բայց հետո ելի շատ խոսքեր անհասկանալի մնացին:

Վարժուհին ասում ե, թե այժմ հարկավոր ե հանրապետություն (այդ ինչ խոսք ե) հաստատել, ոգնել բանվորներին նրանց կովում: Յեղելությունը նա յերկար բացատրեց, այնքան յերկար, վոր Սաքոն, լսելու անսովոր լինելուց և խեղդուկ ողից՝ այլևս բոլորովին չեր հասկանում: Գյուղացիների և կանանց ղեմքերից քրախնք եր թավովում, նրանց յերեսները տարորինակ էին դարձել: «Նրանց համար ել հասկանալը դժուար ե», — անցավ Սաքոյի մաքով:

Յերք ուսուցչուհին յուր խոսքը ավարտեց, բոլորը միանգամից սկսեցին խոսել: Թե ինչի մասին էին խոսում — դժուար եր վորոշել:

Ուսուցչուհին խնդրեց բոլորից, վոր հերթով խոսեն, հարցեր տան:

Յեվ հարցերը տեղացին: Ամեն մեկն իր դարդիցն եր խոսում: Ինչպես սովոր են առանձին առանձին ապրելու, այնպես ել սովոր են առանձին առանձին մտածելու:

Հարցնում էին, թե պետական անտառը այժմ ի՞նչպես կլինի:

Ձինվորների կանանց յե՞րք նպաստ կտան:

Դանիելը հարցրեց, — «յե՞րք ե սահմանադրություն լինելու»:

Այդ նոր խոսքից Սաքոն ուղղակի շշմեց—ա՛յ քեզ և հարբեցող Դանիելը, ինչպես յերևում է, նա ամենից շատ է հասկանում:

Իսկ ձերուհի պապը մի գլուխ պահանջում էր, վոր ասեն նրան—նեւը արդեն աշխարհ եկե՞լ է թե վոչ:

1917 թ. մարտ ամսի այդ յերեկոյան մինչև խորին գիշեր խոսեցին ուսումնարանում: Վերջը Սաքոն արդեն շշմածի պես եր կանգնել, և մի բան միայն նա վորոշակի նկատեց—հարուստներից վոչ մեկը ժողովում չկար, կարծես թե ամենքը մեռել էին:

«Այս բանը նրանց դուր չի գալիս» — գլխի ընկավ նա:

Այդ որից յերեկոյան պարապմունքները ուսումնարանում ընդհատվեցին: Վարժուհին մի գյուղից մյուսն եր մեկնում, իրեն հետ լրագիրներ եր տանում, վրդովված գյուղացիների և կանանց հետ քաղաքների յեղելությունների մասին եր խոսում: Այժմ Սաքոն նրա հետ չխոսեց, թեպետ հարցեր շատ ունեւր:

Ոնիկն ու Վահանը նույնպես չ՛ոչինչ չգիտեցին, և այդ տղաները անոգնական դես ու դեն էյին ընկնում, չափահասներից վոչ վոք նրանց հետ խոսել չեր ուզում:

— Առանց ձեզ ել մեր գլուխը պտույտ է

գալիս, — նրանց հարցերին սովորաբար այդպես էյին պատասխանում նեղացած:

— Իրենք ել չեյին իմանում, թե բանը ինչու՞ն է, — գլխի էյին ընկնում մանուկները:

Վերջապես Սաքոյի մտքովն անցավ Դանիելի մոտ գնալ:

«Գուցե, նա մի բան կպատմի»:

Բոլոր յերեխաները միասին գնացին:

Դանիելը գյուղի ծայրին եր բնակվում, մի փոքրիկ խրճիթում, վոր տաքացվում եր նահապետական ձևով. վառարանը ծխնելույզ չուներ, այնպես վոր, յերբ այնտեղ կրակ եր վառվում, ամբողջ ծուխը խրճիթի մեջ եր մնում:

Դրանից խրճիթը թեպետ տաք եր լինում, բայց ամեն ինչ մրոտվում եր և ինքը Դանիելը և նրա կինը սևացել էյեն, ծխահոտ եր նրանցից գալիս: Յերեխաներին Դանիելն ընդունեց և մինչև անգամ ուրախացավ: Ինչպես միշտ՝ նա կոնծած եր, և յերեխաների հարցերին պատասխանելիս՝ սկսեց խառնիխուռն իր կյանքը պատմել:

Սաքոն անսպասելի կերպով իմացավ, վոր Դանիելը, հարբեցող Դանիելը, գյուղում իր ազատ կամքով չե ապրում, այլ թագավորը և նրա ծառաները «աքսորել են» նրան այդտեղ, և նա «ժողովրդի համար է տուժում»:

Ավելի քան տասը տարի առաջ Դանիելը մի ջահել զինվոր եր, ուրիշ զինվորնորի հետ նրան ել գյուղ եյին բերել և ածել:

— Խփեցեք գյուղացիներին, նրանք թագա-  
վորի զեմ ապստամբում են, հարկեր չեն ուզում  
վճարել:

Ձինվորները հրացանները ուսերին դրին և  
հրապարակը գնացին, ուր ամբողջ գյուղն եր  
հավարված:

Ձինվորների զլուխները մտցրել եյին, վոր  
մեծավորին լսեն, հնազանդ լինեն: Գոացին.  
բայց այնտեղ նրանց առջև գյուղացիներ և կա-  
նայք եյին կանգնած, ահես, իրենց հայրերն ու  
մայրերը լինեյին. խփել վեղբայցան, և ինչո՞ւ  
համար, — նշանակած ահագին հարկերը չեն վճա-  
րում. ինչ տեղից վճարեն — ամեն կողմից սոս-  
կալի աղբատու թյունը յերևում ե:

Հե՛նց վոր սղան հրամայեց, վոր հրացաննե-  
րը նշանի բռնեն — դեռ հնազանդ լեցին, բռնե-  
ցին: Իսկ յերբ հրամայեց՝ «խփի՛ր» — կարծես թե  
ամենքը քարացել եյին, արձան կտրել:

Դե՛ն, այդտեղից ել սկսվեց: Գյուղացիները  
լալիս են, ձեռները նրանց են մե՛նում, զին-  
վորները հրացանները նրանց առջևն են դրում:  
Հիմարաբար կարծում եյին, թե բանը դրանով  
ել կվերջանա, բայց այդպես չեր: Յերեկոյան

զեմ մի խումբ զազախներ, «թագավորի հավա-  
տարիմ շնորք» յեկան և բռնուտեցին թե գյուղացի-  
ներին և թե զինվորներին, բոլորին ել մարակ-  
ներով արյունաշաղախ ձեծեցին: Մինչև անգամ  
կանանց գանահարում եյին վողոցներում: Ձին-  
վորներին ձերբակալեցին և քաղաքի բանտը  
գցեցին: Հետո դատաստան յեղավ, և նրանց գա-  
նազան տեղեր ուղարկեցին, հեռու տեղեր: Յեվ  
ահա այդ իսկ ժամանակ Դանիելն այդ կողմի  
անտառներն ընկավ: Շատ մարդ եր նստած  
բանտում, կա ին և ուսումնականներ: Հենց նրանք  
ել հասկացրել եյին Դանիելին, թե ինչպես թա-  
գավորը մի ժողովուրդ մյուսի զեմ ե գրգռում,  
թե թագավորին սլեաք ե քշել և սահմանադրու-  
թյուն հրատարակել, այնպիսի մի նոր որենք,  
վորի հիման վրա ով վոր բան ե անում, աշխա-  
տում ե, — նա ել բոլոր կարգերը կսահմանի:

Դանիելի պատմածները տղաները ուշագրու-  
թյամբ լսում եյին, իսկ վերջը չհամբերեցին,  
հարցրին այն բանի մասին, ինչ վոր ամենից  
շատ եր տանջում նրանց:

— Դանիել, ինչպես կլինի նոր կյանքը, ար-  
դյոք մարդիկ կդադարե՞ն միմյանց նեղել, ար-  
դյոք ամենքը կսուշտ կլինեն:

— Կլինեն, — վստահ ասաց Դանիելը, թափ  
տալով իր ծխոտած մազերը:

— Բայց յե՞րբ, — միաբերան գոչեցին բոլոր  
յերեխաները:

Դանիելը շտկվեց, հանդիսավոր կերպով աչքը  
նրանց վրա գցեց և, դժվարութեամբ արտասա-  
նելով յերկայն խոսքը, ասաց.

— Յերբ վոր սոցիալիզմ կլինի:

Յերեխաները հառաչեցին: Վերջին ժամա-  
նակներս նրանք այդպիսի խոսք վոչ մի անգամ  
չէին լսել: Բոլորովին անհասկանալի յե:

## 6. ԲԱՆՎՈՆԵՐ ՅԵԿԱՆ.

Գարունն ել յեկավ:

Այս տարի նա մըրկահույզ եր և խայտալից:  
Ջյունը շուտ հալվեց, տաք ուրեր եյին, բայց գի-  
շերները ցուրտը զարձյալ չարութեան եր անում:  
Առաջին արտաք գիշերվա ցրտից սկսեց դեղնել  
և գյուղացիները չէին կարողանում վճռել-ցանք-  
սի ձեռնամուխ լինեն թե՞ վոչ:

Բայց այն ժամանակ գյուղում զանազան լու-  
րեր եյին պտտվում, մեկը մյուսից խառն, մեկը  
մյուսին հակասող: Մեկ ասում եյին, թե այժմ  
պետք է հարուստ գյուղացիների հողը պակասե-  
ցնել և տալ նրանց, վորոնց հողը քիչ է, բերնե-  
բերան հաղորդում եյին, — «թուլլերից, զինվորնե-  
րի կանանցից հողը պետք է խլել, վորովհետև նրանք  
չեն կարողանում վար ու ցանքս անել, հողը թող  
նրանք վերցնեն, ովքեր ուժ ունին»: Մի քանի  
գյուղում վորոշել եյին նորից հողը բաժանել,  
մի տեղ ել գյուղացիների մի մասը կոտորել եր  
մյուսին:

— Այժմ ազատութեան է, — ասում եյին գյու-  
ղացիները, — ով ինչ ուզում է, կարող է անել:

— Հին որեւնքները վոչնչացրել են, նորերը չեն գրել, դեհ ամեն մեկը թող ապրի, ինչպես ուզում ե:

— Գլխավորն են ե, վոր հարկեր չպետք ե վճարենք, ուսումնարանները, հիվանդանոցները պիտի փակվեն, այնտեղ մենք միայն ճրիակերներին են կերակրում:

Սաքոն ամեն տեղ լինում եր, ամեն բան լսում: Յերբ գարունը յեկավ, նա բոլորովին մենամենակ մնաց:

Ուրիկն ու Վահանն իրենց մայրերի հետ հանդերը գնացին աշխատելու, հիմի նրանք խոսելու ժամանակ չունեյին: Դանիելը մի ինչ վոր տեղ աշխատանքի ե վարձուել, ուսուցչուհին նահանգական քաղաքն ե գնացել,—այն տեղից նրան կանչել են:

Դժվար ե հասկանալ, թե գյուղացիները ինչի համար են գողգողում: Յեվ Սաքոն գրքերը դեն դրեց, առանց գրքերի ել նրա մտքերը շատ են: Միթե դա ազատութուն ե, վոր հողի համար մարդիկ միմյանց մորթեն: Միթե դա տգատութուն ե, վոր ուսումնարանները քակվեն:

Սաքոն սովորել եր գյուղացիների ժողովներին գնալ: Հետաքրքրական ե տեսնել, լսել, յերբ շատ գյուղացիներ մի տեղ են հավաքվում:

Այսոր Սաքոն կանուխ առավտից հրատա-

րակում դեռ ու դեն ե պտւտում: Որը կիրակի յե, բոլոր գյուղերից մարդիկ են յեկել, պատարադից հետո շրջանի ընդհանուր ժողովն ե նշանակված:

Սաքոն սայլերի միջև անց ու դարձ ե անում, դիտում ե, թե ով ե յեկել, գրեթե ամենքին ճանաչում ե ե զարմանում.— յեկել են միայն նրանք, վորոնք ավելի հարուստ են. նրանք, վորոնք ե հող ունեն ե հաց ունեն ծախելու, իսկ իսկական աղքատները չկան: Ո՛ւր են նրանք: Տանը նստած են, ժողովներին քիթներն ել ցույց չեն տալիս, դեռ մրափած են...

Մի սայլի մոտ լուռ հագնված յերկու գյուղացի մի ինչ վոր բանի մասին կիսաշշուկ վըստում են: Սաքոն մոտեցավ նրանց:

— Դու ուրեմն ասում ես, վոր հացը պետք ե թանգացնել,—հարցրեց իր խոսակցից մի հողթանդամ շիկահեր գյուղացի, խուլ, թավ ձայնով:

— Առանց խոսելու,—շշուկ մյուսը: Նրա յերկայն ոսկրոտ յերեսին սուր աչքերը միալար վաղվղում եյին, իսկ նեղ սեպածեզ միրուքը նրա դեմքը այծի դնչի յեր նմանեցնում, ե նրան հենց «նենգ այծ» եյին կոչում:

— Հո հացը ամենքին հարկավոր ե,—շտապ շշուկաց «այծը»,—առանց հացի վոչինչ չես անիլ, իսկ նա մեր ձեռին ե—ու՛յժն ել ուրեմն մերն

ե: կգան, գլուխ կտան, կաղաչեն, մենք ել ինչ գին ուզենանք, կնշանակենք:

Սաքոն այդ գյուղացուն լավ է ճանաչում: Մոտ անցյալում նա տանուտեր եր, բայց բռնվեց—համայնքի փողը գողացել եր: Հարուստ գյուղացի յե, ագահ, զեռ հերվանից սկսել եր հաց առնել, ուրիշ բակերում թագցնում ե:

Մոստոյներն ավելի ևս գլուխները մոտեցրին, ավելի կամաց սկսեցին խոսել: Սաքոն հեռացավ:

Սայլերից մեկի տակ նստել եր իր գյուղացի մի զինվորի կինը՝ Թեկղին. նրա շուրջը չորս յեբեխաններն եյին. վժվժում—մեկը մյուսից փոքր:

Սաքոն մոտեցավ նրան և բարևեց:

— Մայրիկս ինչպե՞ս ե ապրում—հարցրեց նա:

— Միթե մենք, կանայքս, ապրում ենք,— պատասխանեց Թեկղին:

— Մենք, տղաս, չենք ապրում, այլ կյանքի շուրջը կուչ ենք գալիս:

Ձեռքի արագ շարժումով քաշեց վզի թաշ կինակի ծայրերը, նայեց յեբեխաններին և կարծես խեղդվելով ավելացրեց:

— Այ, ժողով եմ յեկել, բարի մարդիկ ինձ բերին, եսոր յես չորս յեբեխաններին զուրս եմ բերելու և համայնքին տալու, յեսնրբանց կերակրելու համար բան չունեմ: Մարդս չիս. պա-

տերազմ են տարել, նպաստ չեն տալիս, իսկ մոտ որերս վերջին կտոր հողն ել խլեցին, ասում են, թե՛ այսպիսի նոր որենք ե զուրս յեկել. ով վոր հերկելու ձի չունի, հողը պիտի տա... Դե վոր եղպես ե, յեբեխաններն ել թող վերցնեն, կերակրեն, իսկ յես...

Թեկղին արցունքը սրբեց և հրաժեշտի հայացքով չորս զգգված գլուխներին նայեց:

— Այդ բոլորը առաջվա զրազիրն ե անում, —ասաց Սաքոն,— մենքին նա ե խառնշտորում, կանանցից վերջին ունեցածը խլում: Դուք ինչո՞ւ եք լուում:

— Հիմար ես, ա՛յ տղա, ծիտը վոր ճրվճվա, ո՞վ ե նրան լսելու:

Մի ժամից հետո ժողովը արդեն ազմկում եր: 500 մարդ եր հավաքվել, իսկ շրջանում 6000 հողի յե հաշվում ընդամենը, կանայք հո ամենեվին չեն յերկում. մի-յերկուսը յետեվում թագ են կացել:

Սկսեցին նախագահ ընտրել:

— Մաղմանյանի՛ն, Մաղմանյանի՛ն,—միանգամից բղավեցին մի քանի հարյուր հողի,—Մաղմանյանի՛ն, նրա բողազը լին ե:

— Փինաչյանի՛ն, Փինաչյանի՛ն,—բղավում եյին մյուսները,—նա նոր որենքները զիտե:

Ավելի դուգոռացին նրանք, վորոնք Մաղ-

մանյանին եյլն ուզում: Դուրս յեկավ այն հազ-  
թանդամ գյուղացին, վոր սայլի մոտ հացի մա-  
սին եր փսփսում:

Ամբոխի մեջտեղում նա սեղան բարձրացավ,  
գտա՛ր հանեց, չորս կողմը զլուխ ավեց:

— Քաղաքայինե՛ր,— սկսեց նա,— և վորով-  
հետև մենք այժմ ազատ ժողովուրդ ենք, ուս-  
տի կարող ենք ամեն բանի մասին խոսել, ինչ  
վոր կամենում ենք, բայց այսոր մեր խոսակցու-  
թյան առաջին նյութը հացի մասին է. գործա-  
րած ից մարդիկ են յեկել այստեղ հաց գնելու,  
և խոսել են ուզում, արդյոք լսելո՞ւ ենք:

— Թո՛ղ խոսեն,— գոռաց ամբոխը:

— Մե՛ք նրանց աժան հաց չենք ծախիլ:

— Տես հա՛, բան ու գործ չունեն, քաշ են գալիս:

Սաքոն ականջիկը սրեց: Ինչ վոր տեղից  
նոր մարդիկ են յեկել. ինչ վոր բան են ասելու:

Մազ Բանյանը յետ թեքվեց, մի ինչվոր մար-  
դու հետ փսփսաց, և սեղանի վրա նրա կողքին  
մի անձանիթ մարդ կանգնեց:

Ջահել, մաքուր թրաշած դեմքով, վառ  
և աշխույժ աչքերով մարդը Սաքոյին ուրիշ աչ-  
խարհից յեկած մարդ թվաց:

Նրա վայելչաձև, շարժուն կերպարանքը, և  
կաշվե կուրտկայով, խիստ տարբերվում եր լայն  
շորեր հագած գյուղացիներէց:

— Ընկերնե՛ր,— սկսեց նա,— ինձ ձեզ մոտ  
են ուղարկել Պ. գործարանի բանվորները: Դուք  
զիտեք, թե քաղաքներում վորպիսի ծանր կռիվ  
ենք սկսել մենք: Ջինվորների՝ ձեր յեղբայրա-  
կիցիների հետ, փետրվարին մենք թագավորին  
վճարեցինք, բայց նրանից հետո դեռ ևս մնացել  
են մեր ամենակատաղի թշնամիները՝ կապիտա-  
լիստները, գործարանատերերը, կալվածատե-  
րերը: Թագավորը չկա, բայց բանվորների և  
գյուղացիների արյունը դեռ թափվում է ռազ-  
մաճակատում՝ աղանների շահերի համար: Մենք  
բանվորներս այդ արյունարբուների հետ ենք  
կռվում, մեր հաղթութունը ուզում ենք մինչև  
վերջ հասցնել: Գյուղացի յեղբայրներ, դուք,  
ինչպես և մենք, պատերազմ չենք ուզում, ձեզ  
կալվածատերերի հողն է հարկավոր: Այդ բոլորը  
կլինի, յերբ մենք միասին կհաղթենք մեր թըշ-  
նամիներին: Բայց կռվել մեզ համար դժվար է,  
քաղաքներում մենք սոված ենք, ամբողջ հացը  
ռազմաճակատ է գնում: Ձեզ մոտ գյուղերում  
դեռ ևս հաց շատ կա, կլճարենք, վորքան կա-  
րող ենք, միայն թանգ չուզենաք,— չկա:

Գյուղացիները հուզվեցին:

— Տո՛ւ, ուրիշի հաշվով են ուզում բան անել:

— Դուք ել մեզ պես մեջքներդ ծռեցեք,  
հետո աժան գնով վերցրեք:

— Նոր ազաներ են գուրս յեկել, մեր վզին են ուզում նստել:

Սոսողը մեկնեց իր մեծ, կնճռապատ ձեռները:

— Տեսեր, ընկերներ, մենք ազաներ ենք: Այս ձեռիս կոշտեր կան, շատ կան, մանկությունից այս ձեռքերը բան են արել, և ամենքս ել այդպես ենք. մեր կյանքը մեքենայի, կռանի մոտ է անցնում, ձեզ համար մեխեր ենք շինում, արտրներ... Այժմ, ինչպես մի մարդ, բոլոր աշխատավորների լավագույն կյանքի համար ենք մենք կռվում, գրեթե ամենքը բանվորական կուսակցության անդամ են գրվել, և գործում ենք: Գրանից ձեզ ել ոգուտ կլինի, ոգնեցեք մեզ, հաց տվեք, զրա փոխարենը կհատուցանենք, ինչով վոր կարող կլինենք:

Գյուղացիները կրկին գոռգոռացին:

— Ձեր կուսակցութունները մեզ պետք չեն:

— Ինչպե՞ս չեն: Շատ բան եք շինել: Քաղաքում վոչինչ գնել չի կարելի:

— Կհատուցանենք, կհատուցանենք, բայց ի՞նչ եք վճարելու: Շաքար տվեք, չի՞թ տվեք:

Բանվորը աչքերը գցեց իր առաջ ձիացող գյուղացիների գլուխների վրա, վորոնց բերանները զայրացած աղաղակից բաց էին, և նորից խոսեց:

— Մենք շաքար ու չի՞թ ել չենք տեսնում: Քաղաքում, ասում եք, վոչինչ չկա, Բայց ի՞նչ է պատճառը: Պատճառն այն է, վոր կապիտալիստները և կալվածատերերը, ահա յերեք տարի յե շուտով, վոր իրենց շահերի համար են պատերազմ մղում, բոլոր գործարանները պատերազմի համար են աշխատում, բնակիչներին համար վոչինչ չկա, շուտ պետք է պատերազմին վերջ տալ:

— Եղ ճիշտ է, ուղիղ է, — դարձյալ պոռացին բոլոր գյուղացիները միասին:

— Պատերազմը վերջացնել:

— Բայց հաց չենք տալ, մենք համաձայն չենք:

Սեղանի վրայից Մաղմանյանը գլուխն եր շարժում ի նշան հավանության, պաշտպանում եր աղմուկ հանողներին:

Սեղան բարձրացավ մյուս բանվորը:

— Գնա, Անդրեաս, ասաց նա շահելին, — թող յես նրանց հետ խոսեմ:

Նա գլխարկը վերցրեց, և ամենքը նրա գլխին մի մեծ շերտ տեսան, վոր ճակատից գնում եր դեպի ծոծրակը ալեխառն մազերի միջով — կարճված տեղի սպիտակ հետքն եր: Նրա նիհար դեմքը շարունակ քաջբռտվում եր, աչքերը տխրամած էին նայում, բայց միևնույն ժամանակ հաստատ:

— Գյուղացիներ, — ասացնա հասկանալի, մեղմ ձայնով:— Շատ տարի յե, վոր մենք լավագույն կյանքի համար ենք կովում, կովում ենք, վոր ել անասուններ չմնանք, վոր ճնշված և հալածված չլինենք, կովում ենք, վոր լինենք այնպիսի մարդիկ, վորոնք համերաշխ դեպի հավասարության և ազատության թագավորությունն են գնում:

Այնպես եր թվում, թե ինքն իրեն հետ եր խոսում, իր առջև նոր ճշմարիտ կյանք եր տեսնում: Յեվ ամենքն ակամա լռեցին:

— Դժվար ե այդ կռիվը, — շարունակեց նա, — բաղձալի կյանքի ուղին յերկար ե, միայն այն ժամանակ հաղթություն կլինի, յերբ վոր աշխարհիս բոլոր աշխատավորները կկովեն կապիտալի դեմ: Մենք, բանվորներս, առջևից ենք գնում, գործարանները մեզ միացրել են, համերաշխությամբ կովել են անվորեցրել: Մենք վոչ բանտերից, վոչ աքսորներից, վոչ կատրոլից (տաժանակիր աշխատանքի դատապարտվելուց) չենք վախեցել, մեր կյանքը չենք խնայել...

— Կատրժնիկ, — հանկարծ միասին գոռացին գյուղացիները. — Գնա, հեռացի՛ր:

Բանվորը դարմացած նայեց բղավող ամբոխին:

— Այո, յես կատրժնիկ եմ յեղել, բայց ինչո՞ւ:

— Գնա, կռի՛ր. խաբեբաներին մենք հաց չենք տալ:

— Դրան տես, կատրգով ե պարծենում:

Մաքոն ճզմածի պես եր կանգնել, ամոթից նրա թշերը կարմրել էյին. սիրտը սաստիկ բաբախում եր:

Նա պարզ մտաբերեց Դանիելի բոլոր պատմածները: Ճշմարտության համար մարդկանց բանտերում փթեցնում, աքսորներում տանջում էյին:

«Ազահնե՛ր, ազահնե՛ր, — մտածեց նա գյուղացիների մասին: Ամեն մեկը պատրաստ ե իր հացի վրա մեռնել, բայց ուրիշին չի տալ: Միայն իրենց մասին են մտածում, մի քիչ հեռու նայել չեն կարողանում»: Նա գլուխը բարձրացրեց և սեղանի վրա բանվորներին արդեն չտեսավ: Միայն Մաղմայանն եր կանգնած՝ գղակը խիզախ մի կողքին դրած, և, վորքան ուժ ունեւր, բղավում եր:

— Համաձայն չենք հաց տալու:

— Համաձայն չենք... — պոռում էյին գյուղացիները:

«Բանվորները ուր են: Յերևի, գնացել են», — անցավ Մաքոյի մոքով, և նա վազեվազ գնաց գյուղում փնտրելու քաղաքից յեկած հյուրերին:

«Իրանք իմանում են ինչ անել, ինչպես  
կյանքը կարգավորել,—մտածում եր նա,—մի  
ինչ վոր կուսակցութիւնն ունեն. եղ ի՞նչ կու-  
սակցութիւնն են»:

## Դ. ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ.

Բանվորներին Սաքոն շուտ չգտավ:

Յերբ նա նրանց տեսավ, նրանք միասին  
նստած եյին Կ. գետի ափին և մի ինչ վոր բա-  
նի մասին հանգիստ խոսում եյին:

Հեալով Սաքոն նրանց մոտ վազեց, նրանց  
համար խորը վիրավորանքի զգացմունքով լցված:  
Ինքն ել չիմացավ, թե ինչ դուրս տվեց.

— Յեղբայրներ, ամենքն ել գյուղում այդ-  
պես չեն, կան և այնպիսիները, վորոնք մեղ-  
քանում են ձեզ:

Բանվորները աչքով վտտից մինչև գլուխ չա-  
փեցին նրան:

— Ա՛յ փոքրիկ, եղ ինչի՞ մասին ես խոսում,—  
հարցրեց նրան Անդրեասը:

— Հացի,—կրկին խոսեց Սաքոն վրդովվե-  
լով,—նրանք ձեզ չտվին, եղ Մազմանյանի, Փի-  
նաչյանի արես մարդիկն են չտվողները: Իրենց  
գյուղացիներին ել նրանք վռչինչ չեն տալիս,  
հնարք են փնտրում վերջինը խլելու. ա՛յ, գին-  
վորի կին Թեկղիի վերջին հողն են ձև ոքից խլել...

Բանվորներինց մեկը իր հանգիստ ժպիտով ժպտաց: Սաքոյի թևինց բռնեց և իր մոտ քաշեց նրան:

— Նստիր, այ տղա, յերևում ե, վոր դու խելոք ես: Մենք լավ զիտենք, վոր գյուղում ամենրը միատեսակ չեն, բայց մեզ հարկավորները, ինչպես յերևում ե, դեռ քնած են:

— Քնած են,—տաք տաք հաստատեց Սաքոն,—չեն իմանում ինչ անեն: Այ, յես ել չզիտեմ, թե ինչ անեմ:

Յեվ հանկարծ բոլորովին կարմրելով, արագ-արագ, աղերսալից աչքերով մերթ մեկին, մերթ մյուսին նայելով, ասաց.

— Տարեք ինձ այստեղից, տարեք ձեզ հետ, ինչ վոր ուզենաք, յես կանեմ... Իմանալ եմ ուզում, հասկանալ եմ ուզում... վերտեղ ե ճըշմարտությունը:

Քաղաքից յեկած բանվորները յերկար խոսեցին գյուղացի տղայի հետ, իսկ վերջը Անդրեան ասաց.

— Վերցնենք սրան, Ստեփան, գործի կը գնենք, աշխուժ տղա յե, իսկ այստեղ նա ավելորդ ե: Բայց մի բան կա,—զիմեց նա Սաքոյին,—մայրդ ինչպես կմնա:

— Ինչպե՞ս,—Սաքոն իր աչրերը ուղղակի Անդրեասի վրա գցեց. յերևում ե, զրա մասին

նա մի քանի անգամ եր մտածել:—Ինչպե՞ս,—կրկնեց նա:—Թե վոր մնամ այստեղ—յես դարձյալ կորչելու յեմ, վիշուր ինձ մաշիլու յե, գուցե, Դանիելի պես յես ել հարբեցող դառնամ. դրանից մորս կյանքը չի քաղցրանալ, իսկ յեթե գնամ, կիմանամ, թե ինչպես պետք ե ասլրել—և մորս համար յես ավելի շատ բան կանեմ:

Յերեկոյան մի վողբիկ, աղմկող մեքենայով շողենալ նստած, Սաքոն Ենդրեասի և Ստեփանի հետ գնաց նրանց գործարանը:

Տախտակամածի վրա կանգնած նա դիտում եր, թե ինչպես հարադատ տեղերն ավելի և ավելի եյին հեռանում նրանից: Աչքից ծածկվեց գոյղը:

— Ի՞նչ ես սուս կայել այ տղա,—հարցրեց Ստեփանը:—Յերեկ գյուղական կյանքն ես ավաստում:

— Այնտեղ վոչինչ լավ բան չկա, այնտեղ մարդիկ միայն տանջվում են:

— Սպասիր, մի քիչ ժամանակ տուր, նրանց ել կողնենք,—լստահ ասաց Անդրեասը:—Դործը, յեղբայրս, միայն սլավում ե: Քանի տարեկան ես:

— Մոտ ժամանակներս տասն և չորսը լրացավ:

— Դեհ, մինչև ձերությունդ քեզ համար

գործ կլինի: Տեսե՞լ ես, թե ինչպես են տուն շինում: Յերկար ժամանակ են աշխատում: Իսկ մենք հոնոր կյանք ենք կաղմակերպում: Հանաք ե:

Շոգենավը առավոտյան մոտենում եր գործարանի շինին: Կարծես կորացած եր փոքրիկ փայտե տներով այդ շենը, իսկ նրա կողքին ահագին գործարանի շարեշար բարձր ծխնելույզներն ելին սևին տալիս:

— Ծխնելույզներ, ես ինչքան ծխնելույզներ կան,—բղավեց Մաքոն,—և ինչպես քարակ, սև են, առես թե սատանան ե մոմեր անկել:

— Հա, եդ մեկը ճիշտ ե, վոր սատանան ե, —ծիծաղեց Ստեփանը,—այդ ծխնելույզների տակ այնպիսի աշխատանք ե կատարվում, ինչպես դժոխքում:

Իարձյալ Մաքոն սիսեց ծրարներով դես ուղեն վագել: Ստեփանը ուզում եր նրան գործարանի ուսումնարանում տեղավորել, բայց չընդունեցին: Յերկար ժամանակ բժիշկը քննեց Մաքոյին. կոնների, վոտների, մեջքի մկաններն երը շոշափեց, կուրծքը չափեց, ահանջ դրեց և վերջապես առաց:

— Չե, բան անելու անպետք ե, թույլ ե, սաստիկ քիչ ե զարգացել:

Մաքոյի համար ծանր եր այդ լսել, բայց ինչ

արած. յերևում ե, վոր Մանուչարյանի մոտ յերկու տարի աշխատելն իր բանը արել եր, մարմինը չորացրել եր:

Այն ժամանակ Ստեփանը նրան տեղավորեց նամակատարի պաշտոնում մետաղագործների պրոֆմիության մեջ:

Մաքոն նոր խոսքերից այլևս չեր վախենում, լսում, պինդ միտն եր պահում և աշխատում եր նրանց նշանակութունը հասկանալ: Այսպես, որինակի համար, պրոֆմիություն խոսքը, կամ, ավելի ճիշտ, յերկու խոսքը՝ պրոֆեսսիոնալ կամ արհեստակցական միություն խոսքերը, վորոնք սկզբում սարսափելի ելին թվում, բայց հետո շատ հասարակ խոսքեր դուրս յեկան,—մի միություն, վոր հետևում ե այն բանին, վոր աշխատանքը մարդկանց չայլանդակի: Յեթե առաջ այդպիսի միություն լիներ գյուղական բանվորների համար, այն ժամանակ Մանուչարյանը չեր համարձակվի դիշեր-ցերեկ յերեխաներին պարտն վորել տալով կոտորել:

Մաքոն մի արհեստանոցից մյուսն ե գնում ծրարներ տանելով և զարմանում. այ, ահագին գործարան ե, այ, խոշոր մեքենաներ են, ենքան բանվոր կա, վոր յեթե տասը գյուղ հավաքես, ելի քիչ կլինի, իսկ աշխատանքը ճիշտ վոր դժոխային ե:

Սաքոն սիրում եր նայել, թե ինչպես են հանքեր հալում: Դրա համար անազին հնոցներ են շինված, նրանց մեջ քարածուխը ուղղակի փոքրիկ վագոններով են լցնում, իսկ քարածուխից հետո հանքն էլ նրա մեջ են լցնում: Հնոցի բոլոր դռները պինդ ամրացնում են և սաստիկ տաքացնում: Հնոցների աղյուսից շինած հաստ պատերը սաստիկ տաքանում են, գրեթե թափանցիկ են դառնում: Ապա սկսում են հալած հանքը դուրս թողնել: Բանվորները կաշվե թաթպաններով մինչև արմունկը և կաշվե գոգնոցներով՝ մի քանի աղյուս յերկաթե լծակներով կտրատում են և շիկնած խորքից հրեղեն գետն ե դուրս գալիս: Նա արագ ե հոսում, կարմիր-կապույտ կայծեր ցայտելով, և այդ կայծերից մարդու գլխին մագերն են այրվում և դաղած տեղեր են մնում մարմնի վրա: Սակայն մարդիկ արիաբար են կանգնած: Թաց ավազի մեջ նրանք ճանապարհ են պատրաստել հոսանքի համար և ողնում են, վոր հեղուկ յերկաթը պատրաստած կաղապարների մեջ թափվի: Մուգ-կարմիր հանքի փոխարեն հետևյալ որը մաքուր ձուլված յերկաթի կտորներ կհանեն կաղապարներից: Ինչ վոր կամենում ես, շինիր նրանցից:

«Ահա թե վորքան ուժեղ են մարդիկ, — ուրախանում ե Սաքոն, — ամենակարծրը փափկա-

ցնում են, ինչպես կամենում են, այնպես ել վարվում են կրակի հետ»: Սաքոյին առանձնապես դուր եր գալիս այն բաժանմունքը, ուր շոգեշարժ կռանն եր գործում: Հարյուր հիսուն փութ եր նրա քաշը. կոճակը սեղմելուց նա հնազանդորեն կամ բարձրանում եր, կամ ցած իջնում և սարսափելի աղմուկով մետաղի խոշոր կտորները տափկացնում:

Այս արհեստանոցում Սաքոն յերկար եր կանգ առնում և զարմանալի մեքենային նայում:

— Վեր ծոծրակին խփի, ինչ կլինի, — մի անգամ հարցրեց նա: Բանվորները ծիծաղեցին:

— Ե՛հ, տգետ գյուղացի, վոր քեզ դիպի, ել մարդ չի կարող իմանալ, թե ծոծրակդ ինչ տեղ ե:

Կռելու արհեստանոցներում յերկաթի կտորներ ելին նետվում մի քուրայից մյուսը, մի մեքենայից մյուսին ելին անցնում և հնազանդորեն մարդկանց վոսների սուաջ ելին ընկնում ինչպես բարակ թերթեր:

Այստեղ ել մարդիկ տաքից խեղդվում ելին, գլանների կրճատումներից և յերկաթի շառաշյունից խլանում ելին, բայց համառությամբ կանգնած ելին մեքենաների մոտ և ըստ սովորության հանգիստ կռավարում ելին նրանց: Յեւ վոչ վոք չեր ասում՝

— Այս իմն ե:

Ինչ վոր շինված եր, շինել եյին ամենքը միասին: Ամենքը միասին հզոր ուժ եյին, վոր տարրերին եյին հրամաններ տալիս, իսկ յուրաքանչյուրն առանձնապես—վոչինչ եր:

Սաքոն, շունչը կտրած, ժամերով նայում եր այդ մարդկանց աշխատանքին: Նրանց այրած յերեսների վրա հնոցները պայծառ լույս եյին գցում, և թվում եր, թե այդ մարդիկ յերկաթից են շինված և նրանց ներսը բոցավառվում ե:

«Հրեղեն մարդիկ են, —մտածում եր Սաքոն: —Նրանց համար վոչ մի բան սարսափելի չե, ամենքը միասին հազարներով դուրս կգան ու իրենց ցանկացածի համեմատ ամբողջ կյանքը շուռ կտան: Սակայն ինչպէս են նրանք կամենում շուռ տալ, ինչի՞ մասին են մտածում մեքենաների մոտ կանգնած ժամանակ»:

## 8. Մ Ի Տ Ի Ն Գ.

— Միտինգի յեկեք, միտինգի յեկեք, —ճաշի ժամանակ կանչում եյին աշկերտ բանվորները, գոռում եյին ահագին արհեստանոցներում:

— Միտինգը վ, —ումն ե լինելու: Միտինգը չորս ժամին ե լինելու, —խուլ հնչում եր ապակիներով պատած բարձր ծածքի տակ:

Բանվորները ժպտալով նայում եյին անհանգիստ յեղող սղաներին:

— Դրանց տես, ինչպէս են բղավում, կարծես թե մի մեծ բան են անում:

— Գիտեն, թե ինչ բան ե միտինգը, յերեվում ե, վոր նրանց ել դա բավականություն ե պատճառում:

— Առաջվա ժամանակ հենց միայն եդ խոսքի համար մեզ բանտում կփթեցնեյին:

Յերբ վոր Սաքոն միտինգի լուրն առավ, տեղն ու տեղն ուրախությունից թռչլոտեց: Միտինգներում միշտ հետաքրքրական շատ բան են ասում:

Մոտ ժամը չորսին զեպի գործարանի յետևում գտնվող բլրակն եր լայն հոսանքով ձգվում բանվորների կենդանի բազմությունը:

Վ. ում, հասարակ ամբիոնի վրա, աչքի յե ընկնում ահագին կարմիր դրոշակը: Հեռվից ե նա յերևում և բանվորների թափած արյան հիշողություններն ե զարթեցնում:

Կովի տասնյակ տարիների ընթացքում յերկիրը այդ արյունից շատ շատ ե ծծել: Բանվորական շենքի նեղ փողոցները հիշում են այն որերը, յերբ թագավորի արբանյակների գնդակները այնտեղ վժժում եյին: Վիրավորված բանվորները գետին եյին ընկնում, արյունաքամ լինում, հենց իրենց աղքատիկ բնակարանների դռան մոտ ել մեռնում: Մյուսներին բռնում եյին, վանդակապատ պատուհաններով վագոններն եյին նստեցնում ու տանում, հայտնի չեր, թե ուր: Թագավորի բանտերի խուլ անկյուններում առավոտյան լուսաբացին մարդկանց կախում եյին և աղբի փոսերում թաղում և կամ թե տարիներով քարե տոպրակների մեջ եյին հալ ու մաշ անում: Իսկ աշխարհումս քանի՞ այդպիսի գործարաններ կան:

Ամբիոնը կենդանի ողակով ե շրջապատված, հավաքվածները տաք վիճաբանում են, տեղտեղ ել լրագիր են կարդում:

— Ըսկերճե՛ր, — լավում ե գործարանային հանձնաժողովի նախագահի բարձր ձայնը, և ամենքը լռում են, — այսոր մենք խոսելու յենք, թե

ինչ անենք, վոր ճշմարտության համենք: Բայլ շեվիկների կուսակցության կողմից զեկուցում ե անելու ընկ. Նիկողոսը:

Բանվորները բուռն վողջույններով են ընդունում զեկուցողին. իրենցից ե, փորձված մարդ ե:

Նիկողոսը յերկար ե խոսում: Իր դաժան ճառը նա հմուտ և պարզ ե կազմում:

— Շատ տարիներ ենք մենք կովել, — ասում ե նա, — և դարձյալ պետք ե կովենք:

Սաքոն ամբողջապես լսողություն ե դառնում, կլանում ե խոսքերը, վորովհետև նրանք կապ ունեն իր մշտական մտածմունքների հետ:

— Կապիտալիստները շարունակում են պատերազմը՝ իրենց նորանոր շահերի համար: Նրանց շահերը աշխատավորների արյունն ու քրտինքն են: Յեվ այս բոլորը այնպես ե սարքված, վոր աղքատները աննկատելի կերպով իրենք են անձնատուր լինում այդ գիշակերներին:

Դե ի հարկե, այդպես ե, — մտածում ե Սաքոն, — հորս պատերազմ տարան, նա մի խոսք ել չասաց: Ով գիտե, թե ինչ տեղ են նրան սպանել, և ինչու համար... Կամ թե մորս վերցնենք, — յերբ Մանուչարյանը նրա Սաքոյի կյանքից պարան եր վորրում, նա «բարերար» եր անվանում Մանուչարյանին:

Իսկ Նիկողոսը հետո շարունակում է.

— Պետք է, վոր միլիոնավոր բանվորները, զինվորներն ու գյուղացիները վոչնչացնեն այդ տղրուկներին: Պետք է, վոր նրանք իշխանութունը իրենց ձեռքը վերցնեն, իրենց ուզածիպես կյանքը կարգավորեն:

— Ինչպե՞ս թե իրենց ուզածի պես,—տկանջները սրում է տղան:

— Բանվորները գիտեն, թե ինչպես պետք է կազմակերպեն այդ կյանքը,—կարծես թե Նիկողոսը պատասխանում է նրան:—Հողը, գործարանները, արհեստանոցները նրանք ընդհանուրի սեփականութուն կդարձնեն: Նրանք հազարավոր բարդ մեքենաներ կկռեն-կկռվեն և կդարսեն, բոլոր աշխատավորներին ձեռքով բանելու ծանր աշխատութունից կազատեն. հարկավոր իրերի քանակութունը կկրկնապատկեն, կտասնապատկեն, արտերի պտղաբերութունը կավելացնեն:

Սաքոյի աչքի առաջ կանգնում են գործուրանի պողպատե հզոր մեքենաները: Արդարե, ինչ կլինի, յեթե նրանց թիվը շատանա և ամեն տեսակ գործ նրանք սկսեն անել:

— Գյուղացի-աղքատները կգնան բանվորներին յետևից,—շարունակում է Նիկողոսը:

— Սաքոն ազահաբար լսում է: Շատ բան

անհասկանալի յե: Մի բան պարզ է,—ապրելն ավելի լավ կլինի: Այն ժամանակ թե՛ զինվորի կին Թեկղին և թե՛ Սաքոն այս յերկրի վրա իրենց համար տեղ կգտնեն:

Սաքոյի սիրտը բերկրութունից ճմլվում է, և այնպես է թվում, կարծես թևեր առած՝ մարդ մի ինչ վոր տեղ է թռչում: Յերևում է, վոր ամենքի համար ել լավ է: Բոլորի աչքերը ցուլում են, ավելի և ավելի յեն մոտենում միմյանց:

— Ամեն տեղ, բոլոր պետութուններում, բանվորները այդպես կվարվեն, և զանազան ազգերի միջև սահմանները կանհետանան, պատերազմներ այլևս չեն լինի: Այլևս վոչ մեկը մյուսի լծի տակ չի լինի,—Նիկողոսի ձայնը իբրև զանգակ եր հնչում,—և սոցիալիզմի դարը կգա: Սաքոն ամբողջ մարմնով առաջ է ձգվում:

«Ուրեմն այ ինչ բան է սոցիալիզմը, վորի մասին Դանիելն ել եր խոսում, նա կլինի... կլինի»...

Ինչպես մրրկահույզ ծով, հազարավոր ձայներ են զրրղում:

— Թո՛ղ կորչի պատերազմը:

— Պատերազմ՝ պատերազմի դեմ:

— Կեցցե՛ բանվորների և գյուղացիների իշխանութունը:

Բազմության առջև մեկը մյուսից հետո խոսում

են գործարանի բանվորները: Նրանց խոսքերը պարզ են:

Յերկու ճանապարհ չկա: Մեր առաջ մեկ ճանապարհ ե. ով վոր մեզ հետ չէ, նա մեր դեմ ե:

Միտինգը վերջանում ե:

Մեկը կայտառ ու վստահ՝ սկսում ե սիրած յերզը. —

Վստահ քայլեցեք, ընկերներ,

Կովում կարիանանք հոգով...

Հազարավոր ձայներ ձայնակցում են ծանոթ խոսքերին. միախառնվում են և մի հզոր յերգ ե դառնում:

Արեն արգեն սկսում ե մայր մտնել, նրա շառագույն ճառագայթները դեմքերի վրա յեն ընկել, անդրադառնում են փայլուն աչքերում: Ամենքը կարծես լույս են տալիս, ամենքը ուրիշ տեսակ դարձան:

Յերգի ներդաշնակությամբ մարդիկ շարք-շարք կանգնում են. տղամարդիկ և կանայք, ծերունիներ և յերեխաներ, առանց հրամանների սյուներ են կազմում, ուս. ուսի յեն տալիս, մոտ են զգում միմյանց:

Յերգելով ցրվում են շենի նեղ փողոցներով, դժկամությամբ բաժանվում են շարքերից, ի-

րենց տներն են գնում: Իսկ տանը յուրաքանչյուրը մենակ՝ ընդհանուր գործի մասին ե մտածում, այդ գործի համար կովելու յե պատրաստվում:

9. ՂԱԶԱԽՆԵՐԸ ՀԱՐՁԱԿՎՈՒՄ ԵՆ.

Փամանակը անցնում եր: Ամառը արագ անցավ, աշունն ևս իր տեղացող անձրևներով նույնպես շուտ անցավ: Յեվ հյուսիսի վաղահաս ձմեռը իր թավամագ սպիտակ գորգը փռեց:

Պետրոգրադում և Մոսկվայում, տաք կռիվներից հետո բանվորներն ու ղինվորները վռնդել են կապիտալիստներին և կալվածատերերին, իշխանութիւնը իրենց ձեռքն են առել:

Հեռագրի բարակ թելերով այդ լուրը տարածվեց Ռուսաստանի բոլոր անկյուններում, միլիոնավոր մարդկանց ուղեղը ծակեց:

— Կեցցե՛ք բանվորների, ղինվորների և ազգատ գյուղացիների հեղափոխութիւնը:

— Ամբողջ իշխանութիւնը բանվորների, ղինվորների և գյուղացիների պատգամավորների խորհուրդներին:

Այստեղ, գործարանում, այդ լուրին այնպես վերաբերվեցին, ինչպես վաղուց օպասած բանի: Հակառակ վոչ մի ձայն չլսվեց, վոչ կասկածողներ կային, վոչ ել վախեցողներ:

— Ուրիշ կերպ ինչպես կարող ե լինել,—

ասում էին բանվորները:— Այդպես ել հարկավոր ե, քանի տարի յե, վոր մենք դրան էյինք ձգտում:

— Միթե գեթ մի ազնիվ պրոլետար կարծիք ե իր իշխանութիւն հակառակ գնալ:

Միայն չէին հավատում, վոր կռիվը վերջացել ե:

— Բուրժուազիան դեռ դուրս կսողա, նա ոձի պես ե. տուտը կտրիր, նա դարձյալ կենդանի յե:

— Ելի հարկավոր կլինի մարտնչել:

Յեվ խելացի, յեռանդազին սկսեցին բանվորները ղինվել: Վերջին կոպեկները տվին, յուրաքանչյուր բանվորի համար մի մի հրացան ճարեցին, քաղաքից գնդացիներ (պուլիմյոտներ) բերին:

Յերբ Սաքոն իմացավ, վոր խորհուրդները հողթել յեն, անմիջապես ըկեր Նիկողոսին դիմեց.

— Լսե՛լ ես, ախպեր,— հուզված հարցրեց նա,— մերոնք հաղթել են: Այժմ լավ կլինի, բոլոր չքավորները վտաքի կկանգնեն:

— Ա՛յ փոքրիկ, սպասիբ, շատ մի՛ շտապիր, — ասաց Նիկողոսը:— Նրանց գլխին տվինք, այդ ճիշտ ե, լավ տուինք, իշխանութիւնը մեր ձեռքն առանք, այդպես ե, բայց դա գործի միայն սկիզբն ե: Ազատութիւն թագավորութիւն ծանր դուռը

մենք միքիչ բաց արինք, և պետք է, վոր ամբողջ աշխարհի բոլոր բանվորները մեզ ոգնեն զա՛լայն բանալու: Այն ժամանակ ի՛ր ոք լավ կլինի: Բայց առայժմ ծանրության մեծ մասը մենք մեր վրա յենք բարձել. պետք չէ այժի պէս թռչկոտել, այլ ուժ պետք է հավաքել:

Այս խոսքերի առթիվ Սաքոն մտածմունքների մեջ ընկավ: Յե՛վ նա մտաբերեց շոգենավի վրա Անդրիասի ասած խոսքերը:

«Ամբողջ կյանքումդ քեզ համար գործ կլինի»:

Ուրեմն, ճիշտ է, նոր կյանքը յերկրի վրա շուտ չի հաստատվի: Ե՛ն, վրչինչ, կարելի յե համբերել, միայն թե աջակցություն լինի: Մյուս յերկրներ թանվորները հեռու յեն, բայց ինչպե՞ս է այժմ գյուղում, ի՞նչ են անում գյուղացիները: Գոնե գյուղից մի լուր գար:

Յե՛վ գյուղից լուրեր յեկան: Դեռ ինչպե՛ս յեկան, և ինչպիսի՛ լուրեր:

Մի որ Սաքոն աշխատանքից տուն վերադարձավ և իր մոտ յերկու հյուր գտավ:

Ուղղակի Մեծ գյուղից Ռնիկ Լազյանն եր յեկել, իր տասը տարեկան յեղբայր Մանուկի հետ:

Վրասով ենք յեկել քեզ մոտ: Սաքո՛, լավ են խփել,—ասաց Ռնիկը:—Լսել ենք, վոր դու այստեղ լավ ես ապրում, ժողովներ ես գնում:

Իսկ գյուղում ապրելու ճար չկա: Գյուղացիները կարծես գիժ խոտ են կերած, միմյանց վրա են գնում:

— Ի՞նչ է պատահել վոր,—հարցրեց Սաքոն:

— Մի մասը բայլշիկիների կողմնակից է, միուսները հակառակ են: Պատերազմի ճակատից զինվորներ են սկսել գալ, նրանք բայլշիկներ են, Լենինի, Տրոյկու կողմից են...

— Ա՛հա՛,— ուրախացավ Սաքոն,—նշանակում է՛ հասկանալ են սկսել:

— Ձհասկանալու ի՞նչ կա այդտեղ: Պատերազմը նրանք վերջացրել են, և հողը, վոր առաջ պետական էր, չքավորներին են բաժանելու: Բանը պարզ է, միայն...

— Ի՞նչ միայն:

— Ի՞նչ մարդիկ են դրանք, եղ Լենինն ու Տրոյկին: Դրա համար ել քեզ մոտ եմ վազել, Սաքո, իմանալ եմ ուզում. գործարաններում, ասում են, դրանց մասին գրքեր կան: Մեր գյուղացիները զլխից դուրս յեն տալիս, թե նրանք նեւեր են, գերմանացոց լրտեսներ են: Գյուղացիներին իբրև թե հողով են խաբում, իսկ հետո բոլորին կծախեն գերմանացիներին, դրա համար ել պատերազմի ճակատը փակել են...

— Սաքոն տեղից վեր թռավ,—եղ ո՞վ է ասում:

— Ո՞վ: Համարյա թե ամենքը գյուղում, իսկ ամենից առաջ Փինաչյանը, Մազմանյանը:

Սաքոն ծիծաղեց:

— Մ.յ դեմեր: Նրանք ափսոսում են, վոր պատերազմը վերջանում է, առևտուր անեին ենքան շահավետ չի լինի: Իրենց հողի, իրենց փողի դարձումն են: Զգում են, վոր ժողովրդի վրա իրենց իշխանությունը վերջանում է, զրա համար ել գյուղացի հիմարներին ավելի յեն հիմարացնում:

— Ինչպե՞ս չե, նրանց իշխանությունը վերջանում է, — խոսակցության մեջ մտավ Մանուկն իր բարակ ձայնով, — մեր Մանուչարյանը, հո հիշում ես նրան, իրեն ու վորդու համար հրացաններ է գնել, սպառնում է մեր գյուղում. — «բոլորին կլսվեմ, — ասում է, — յեթե իմ ունեցածին դիպել եք»:

— Ե՛հ, մենք ել հրացաններ ունենք, — հպարտ ասաց Սաքոն, — տեսնենք ով կհաղթի:

Յե՛վ հանկարծ, իբրև կինդանի, ինքը Մանուչարյանը նրան պատկերացավ — հաստ մարմնով, փոքրիկ չար աչքերով, և աղաղակեց բաց բերանով: Միթե այսուհետև ել նա իշխանություն է բանեցնելու, յերեխաներիարյուն է խմելու: Վո՛չ մի կերպ: Այդ դեպքում ավելի լավ է մեռնել:

— Կթագենք, կթագենք նրանց, — ասաց Սա-

քոն խեղդվող ձայնով: — Ամենքս կովելու կգնանք: Միթե դու, Մանուկ, չե՞ս գնալ:

— Յես կգնամ, կրկին ձվաց Մանուկը. — գյուղում ես որ չունեմ: Ով վոր հաց ունի, քշում է քնձ ինչպես շան լակոտի: Իսկ Մարիամը, Սաքո, գիտես, մեռավ: Սովից մեռավ:

Սաքոն գլուխը ցած կախեց:

— Խե՛ղճ Մարիամ, չթողին, վոր ոտքի կանգնեո:

Տղերքն այդ յերեկո շատ խոսեցին, ամենքն ել յերդվեցին կավիլ նոր կյանքի համար, ավելի լավ կյանք ձեռք բերելու համար:

Հետևյալ օրը Ոսիկը մտավ գործարան բանելու, իսկ Մանուկը Սաքոյին սկսեց ոգնել:

Յերեխաները համերաշխ եյին ապրում: Աշխատանքից հետո միասին ժողով եյին վաղում, աշխատում եյին լրագրներ կարդալ, Ո՛հ, յեթե արդպես ամբողջ կյանքը ապրեյին:

Բայց մի գիշեր շատ սու՛ր սուլեց գործանի սուլիչը և անհանգիստ ձայնով սկսեց բանվորներին զարթեցնել:

— Տագնապի՛ նշան է, տագնապի, — լավում եր ամեն կողմից:

— Ի՞նչ է պատահել:

Ամենքը դեպի խորհրդատունն եյին վաղում: Իսկ այնտեղ գենքեր եյին շտապ շտապ բաժանում:

— Շո՛ւտ արեք, ընկերներ: Ղազախների մի խումբ գործարանի վրայ յե գալիս: Ուզում եյին քնած ժամանակ վրայ տալ և ամենքիս կոտորել:

— Ո՞վ կարող ե հրամաններ արձակել:

— Տղերք, ինչ եք պարապ ման գալիս. վորքան կարող եք շատ փամփուշտ վերցրեք, մեզ կտաք:

Յե՛վ մի քանի բոպեյից հետո գործարանի պատերի մոտ գնդակները սուլելով աղիողորմ լալիս եյին, յերկաթե ծնոտները թխթխկացնելով գնդացիքն եր մաղում:

Ղազախները՝ ընդդիմադրութիան հանդիպելով յետ նահանջեցին:

Այդ գիշերից գործարանի խաղաղ կյանքը վերջացավ: Միշտ պետք եր պատրաստ լինել:

Հեռավոր կայարաններում զազախները սկսեցին վաշտեր կազմակերպել բանվորների դեմ: Ռուսաստանի բոլոր ծայրերից սկսեցին նրանց մոտ գնալ թագավորի նախկին սպաներն ու գեներալները, իրենց կալուածներից վռնդված կալվածատերերը, իրենց գործարանների և արհեստանոցների արդյունքներից զրկված կապիտալիստները: Նրանք եյին զազախներին սրում խորհուրդների դեմ, տաժանաբար կոտորում եյին բռնված բայլճեկներին:

— Մի արշին ել հող չե՛նք տալ—ասում եյին

նրանք:—Ամեն մի վուշ արարածի չենք թողնիլ, վոր մեզ հրամաններ տա:

— Դարձյալ ոճը դուրս սողաց,—ասում եյին բանվորները.— ձե՛ծեցինք, բայց չսատկեցրինք. կենտունակ ե անիծվածը:

— Ախպեր, ա՛յ ախպեր,— տղայքն անհանգստացնում եյին ամեն մի պատահողի,— եղղազախները ինչո՞ւ համար են մեզ վրա գալիս, մենք ի՛նչ ենք արել նրանց:

— Ի՞նչ: Փոքրիկ տերեր են, մանր կալվածատերեր են, ուրիշի արյունով եյին ապրում: Ինչի՞ գյուղական հարստահարիչները մեր դեմ են գնում: Նրանք հիմի զազախների հետ միասին կլինեն—յերկուսն ել մի պտուղ են: Իսկ նրանց վրա մեր յերգվյալ թշնամիներն են հեծել և ուզում են ներս մտնել:

Պարապմունքներից հետո մարգագետանում զինվորական վարժություններ եյին լինում: Բոլոր բանվորները գենք բանեցնել եյին սովորում:

Կանայք ու աղջկերք գնում եյին գթության քույրեր լինելու, դասեր լսելու:

Իսկ խորհրդատան վրա մի անագին դրոշակ եր ծածանվում: Բանվորը հրացանը ձեռքում պինդ սեղմած՝ լարված դեպի առաջ եր նայում, Հորիզոնի յետևից պայծառ, կարմիր արեգակն

եր բարձրանում, ահա-ահա վոր աեզ վոր ե կծա-  
գի և իր լույսը կսփռի աշխարհում հօկ առայժմ,  
վաղորդյան ստվերներում սողում եյին մարդ-  
կային մութ կերպարանքներ.— գերացած, ազան  
կապիտալիստն ե, հպարտ ու քնքշացած կալվա-  
ծատեր գեներալը, վոր պատրաստ ե անկիրթ  
զինվորին խփել, ուրիազնիկներ, վոստիկաններ,  
ժանդարմներ, հարստահարիչներ...

Յեզ քամուց յերերվող վորոշակի սլակատը  
յուրաքանչյուրին հիշեցնում եր.

«Հրացանը պինդ բռնիր ձեռքիդ, պրոլետար»:

10. ԿԱՐՄԻՐ ԲԱՆՍԿՈՒՄ.

Անցավ մի տարի:

Հարստահարիչների, գեներալների վաշտերը  
սև ողակով շրջապատեցին Սորհրդային Ռուսաս-  
տանը: Ոտար յերկրների կապիտալիստներն ոգ-  
նում եյին նրանց: Գերմանական, ֆրանսական,  
անգլիական բուրժուազիան գորբեր, փող, գենք  
ե հագուստ եր ուղարկում:

Բանվորական կազմակերպությունները մեկը  
մյուսից հետո՝ ուղամաճակաւ դուրս յեկան:

Գործարանումն ել արշավելու պատրաստու-  
թյուն սկսեցին տեսնել:

Ո՞ւմն ընտրել հրամանատար:

Վճռեցին Ստեփանին: Նա փորձված, ճշմար-  
տասեր մարդ ե:

Ստեփանը վոչինչ չասաց, միայն իր ալե-  
խառն գլխին դրած գդակը ձիգ քաշեց մինչև  
հոնքերը և իր ինքնուրույն ժպիտով ժպտաց:

Այդ վարկյանին նա հիշեց իր աքսորի բոլոր  
տարիները: Հո չի կրկնվի անցյալ կյանքը:

Սաքոն յերբ լսեց ուղամաճակատի մասին,  
նրա մտքովն անցավ.

— Յես ել կգնամ, անպատճառ կգնամ:

— Ե՛հ, դո՛ւ ուր ես գնում Սաքոն,—համոզում եյին նրան բանվորները:— Դու դեռ փոքր ես, ճուտի պես թեփրված ես:

— Յես կմեծանամ, ընկերներ, ճիշտ եմ ասում, կմեծանամ,—հավատացնում էր Սաքոն:— Չե՞ վոր զարնան յես արդէն տասն և վեց տարեկան կլինեմ:

— Դու այստեղ մնա,—գլխից ուղ եյին ասում նրան:

Սաքոն այդ մտքի հետ հաշտվել չէր կարողանում:

Մնալ այստեղ, հանգիստ նստել այն ժամանակ, յերբ տրիշները պիտի կռվեն, պիտի մեռնեն: Ամենքը պիտի գնան պատերազմի ճակատը, այն դեպքում հաղթությունն ավելի շուտ կլինի:

Սաքոն վազեց ընկեր Անդրիասի մոտ: Սա յել ուզումաճակատ ե գնում:

Յերբ Սաքոն նրա մոտ յեկավ, Անդրիասը հեռու ճանապարհորդության պատրաստություններն էր վերջացնում:

Անկյունում դրած էր լավ մաքրած և յուղած հրացանը, կախարանից կիսամուշտակն էր կախված: Անդրիասի կինը, սեղանի մոտ լուռ և լուրջ կանգնած, ճանապարհորդական տոպրակի մեջ

սպիտակեղեն և մի քիչ էլ ուսելիք էր դարսում: Ինքն Անդրիասը՝ աթոռի վրա նստած, իր կոշտ ու կուլիտ մեծ ձեռքով շփում էր չորս տարեկան աղջկա զանգուր գլուխը:

— Հայրի՛կ, հայրի՛կ,—աղջիկը դեպի հայրն էր ձգվում:

— Ճտեսություն, աղջիկս,—ասաց Անդրիասը, ցտեսություն, հայրիկդ հեռու պիտի գնա: Սաքոն կարծես թե կպել էր շեմքին:

— Ի՞նչ կլինի: Իսկ յեթե Անդրիասին հանկարծ սպանե՞ն: Այն ժամանակ ո՞ւր պիտի գնա այս սիրուն աղջիկը:

Անդրիասը դարձավ կնոջը: Դեմքը շատ գորտիպից էր, իսկ ձայնը դաժան:

— Տես հա, Աննա, մենակ մնալով՝ լաց չլինես: Առանց կովի՝ հեղափոխություն չի լինում: Մեզանից առաջ էլ մարդիկ մեռել են, կմեռնենք և մենք, բայց մյուսները ուրիշ կերպ կսկսեն ապրել:

— Ընկեր Անդրիաս,—Սաքոն չկարողացավ իրեն զսպել,—ինձ էլ ձեզ հետ վերցրեք մեր ընդհանուր գործի համար մեռնելու:

Անդրիասը ծիծաղեց:

— Ի՞նչու պիտի մեռնես, դու դեռ պիտի ապրես: Իսկ յեթե ուզում ես ուզումաճակատ գնալ, գնանք, այնտեղ շատ բան կսովորես:

Հետևյալ առավոտ Սաքոն ժիր ու կայտառ ման էր գալիս վաշտի հետ: Ոնիկն և Մանուկը նրան ճանապարհ դրին:

— Մենք էլ շուտով քեզ մոտ կգանք,—բղա-

վեցին նրանք, սպասիր մեզ: ել հինը չի լինիր:

Ինչպես մեծ գետի վտակներ, բանվորական խմբերը քաղաք էյին հոսում: Նրանցից կարմիր գնդեր, զիվիզիաներ էյին կազմակերպում, և իրենց հրամանատարության կարգադրությամբ վորը դեպի արևելք եր գնում, վորը դեպի արևմուտք, վորը դեպի հարավ, վորը դեպի հյուսիս:

Քանի՜ հազար վերաս վստով անցան կարմիր բանակայինները այդ ժամանակամիջոցում:

Քանի՞ քանի մեծ և փոքր գյուղեր, քաղաքներ անցան նրանք: Յեվ Սաքոն նրանցից յեա չեր մնում:

Հրացանը ասես թե կպել եր նրա մեջքին, գրպանում միշտ նոր լրագիր եր լինում կամ մի վորևե գրքույկ:

Գնաց Սաեփանը: Առաջին կռիվներից մեկում նա ընկավ: Նա գնում եր առջևից, և թշնամու գնդակը ուղղակի նրա սիրտը խոցեց: Կարմիր հրամանատարը հնձվածի պես տապալվեց, և նրա մշտական խաղաղ ժպիտը այնպես ել սառած մնաց նրա յերեսին:

Վիրավորված Անդրիասը թիկունքը ուղարկվեց:

Իայց Սաքոն դեռ վողջ ե և անվնաս:

Այդ՝ և՛ լավ ե, և՛ վիրավորական: Վտանգներից յերբեք նա չեր խուսափում: Կարմիր բանակայինը գնդակներին ընտելացել եր, չի վա-

խենում թնդանոթային սլայթուններից: Մի բան նա հաստատ գիտե.

— Ինչ ել վոր լինի, անհրաժեշտ ե առաջ գնալ:

Մի որ գունդը կանգ առավ հանգստանալու:

Սաքոն մտածմունքների մեջ խորասուզվեց, սկսեց փորփորել, հինը մատը բերել:

Յեվ արշավանքների ու կռիվների ժամանակ նրա աչքի առաջ մոռացված մայրն եր: Կուչ յեկած, քաղցից գունատված, կեղտոտ ցնցոտիներով, սրտի մշտական կակիծով եր նա:

— Ինչ անեմ, վորդի,— հնչեց մոր ձայնը:

Սաքոն ցնցվեց: Այդ հարցին նա այժմ կարող եր պատասխանել. նա գիտեր, թե ինչ պետք ե անել՝ մարդկային կատաղի զժբախտությունը արմատախիլ անելու համար:

Հարկավոր ե մի նամակ գրել նրան և ամեն բան բացատել:

Սաքոն մի թերթ թուղթ վերցրեց և յերկար ժամանակ նրանով եր զբաղված, իսկ յերբ վերջացրեց, մի նախշուն, առանձին տեսակի նամակ եր դուրս յեկել:

«Բոլոր յերկրների պրոլետարներ, միացե՛ք:

Կեցցե՛ համաշխարհային հեղափոխությունը:

Կեցցե՛ն պրոլետարիատի առաջնորդները —

Լենին և Տրոցկի ընկերները:

«Սիրելի մայրիկ ջան:

«Այս նամակը գրում եմ քեզ պատերազմի ճակատից: Մեր թշնամիների հետ մենք սաստիկ ենք կռվում և հոսանս հենք խնայում: Կյանքիս բաղձան-

ըը իրազորովեց—այժմ ես գիտակից մտըդ եմ և գիտեմ, ինչ ինչու համար եմ գնում մեռնելու։ Հիմի, մայրիկ ջան, ես լավ գիտեմ, թե բայլչիկինեքը, կամ, ինչպես այժմ սկսել են նրանց անվանել, կոմունիստները ինչ մարդիկ են և ինչու համար են կոչում։ Ինքս ել շուտով կոմունիստ կդառնամ։ Գիտեմ նույնպես, թե ուրիշ ինչ կուսակցու թյուններ կան, թե ինչ բան է սոցիալիզմը։ Այստեղ, կարճիք բանակումն ել մեզ շատ բան են սովորեցնում։ Ամեն սր լրագիր ել եմ կարդում։

«Իմ մասին դու դարդ մի անի և մի լար։ Իմ գործը հաստատ գործ է։ Յեվ յերբ պատերազմի ճակատներում հաղթենք, քո մասին հոգս կ'անեմ, յերեխաների համար ել ընծաներ կբերեմ։ Ընիկ լազյանն ել այստեղ է, պատերազմում, իսկ Մանուկը սանիտարների մոտ է լինում, նրանց է ոգնում։ Նրան գովում են, մեր բանվորական-գյուղացիական հանրապետության համար նրանից լավ քաղաքացի յե դուրս գալիս։ Տեսնում ես, քո դառնագին արցունքներդ դուր չկորան։

«Մնամ քո վորդի՝

ընկեր Ջաքարյան Մարգիս»։

Սաքոն մի քիչ մտածեց և ավելացրեց—

«Բայց կոմունիստներն այնպիսի մարդիկ են, վոր մինչև աստղերն ել կթռչեն։ Ինչ վոր ուզենան, կանեն»։

ԼԵՆԻՆ ՅԱՆ ԳՐԱԳՐԱՆ

Լույս են տեսել

- 1) Լենինի պատգամները յերիտասարդության.
- 2) Լենին.—Ինչպես պետք է լինի կոմյուրիստը.

ՍՈՑ-ԲԱՎԼԱ-ԲԱՎԱՆ ՇԱՐԲ

Լույս են տեսել

- 1) Ստալին.—Գյուղացիական հարց.
- 2) Ստալին.—Սոցալին հարց.

ԴՅՈՒՂԱՑԻՒՄՆ ԳՐԱԳՐԱՆ

Լույս են տեսել

- 1) Լիվինսկի.—Գյուղատնտեսական հարկ.
- 2) Աստու կամքը թե՞ գյուղ. գիտությունը.
- 3) Ռուզին.—Գյուղացիական հողաշինարարության այրուքները.

- 4) Մարդկային բնակարանի պատմությունը.
- 5) Վլասով.—Հողի մշակումը յերաշտի ժամանակ.
- 6) Դմիտրյևիչ.—Տղիտությունը և մնահավատությունը.
- 7) Լ. Բյոզևֆովիչ.—Գեղ կանգնի գերան կը կտորի (կոոպեր. մասին).

Տպագրվում են.

- 8) Բրանսբուրգ.—Կենդանիների հիվանդութ.
- 9) Սկոմորոխով.—Ինչ ոգնությունը հիվանդ կենդան.

ՀԱՆՐԻ ՄԵՏՁԷԼԻ ԳԻՏԵԿԱՆ ԳՐԱԳՐԱՆ

Տպագրվում են.

- 1) Սեմեկին.—Արևը, նրա վորդիները ու թոռները.
- 2) Ուղտից մինչև այրոպլան:
- 3) Սեմաշկո.—Թորախո.
- 4) Սպերանսկի.—Մոր այրուքները.
- 5) Հինսբուրգ.—Յերևի. վարակիչ հիվանդութ.
- 6) Կրավչենկո.—Գյուղում ինչպես անցկացնել կերատրականութ.
- 7) Մատտերն.—Բիմիան գյուղատնտեսութ. մեջ.

ԽՈՐՀՐՈՒՑՆ ԳՊՈՑԻ ԳՐԱԳՐԱՆ

Լույս են տեսել

- 1) Եսիպով.—Գյուղացիության սրտան դպրոցի ծրագիրը.

«Ազգային գրադարան»



NL0318734

- 2) Լենինի պատկերները ժող. տնտեսության հիմնական մասին.
- 3) Տյուրյակուլով.—Ազգային հարցը և դպրոցը.
- 4) Նեկերով.—Ինչպես ելին արյուն ակերի կենները (մանկական).  
Տպագրվում են.
- 5) Պ. Գ. Խ.-ի III մեթ. նամակը.—«Աշխատանքի հարվառումը I աստ. դպր. մասին».
- 6) Պ. Գ. Խ.-ի IV մեթ. նամակը.—Անկրոն դաստիարակութիւնի մասին».
- 7) Ժավորոնկով.—«Հասարակագիտութիւնը I աստ. դպրոցում».
- 8) Կրավչենկո.—«Թե ինչպես Սարոն կարմիր բանակային դարձավ» (մտակ. - միջին և բարձր հաս.):
- 9) Ֆոկս.—«Մինիստր մեկ ժամով» (մանկ. — միջ. և բարձր հաս.):
- 10) Ուրովեց.—«Ճամբորդութիւն ասիական կողմ» (մանկական.):
- 11) Մամիս-Սիրիրյակ.—«Մոծակի և արջի մասին» (մանկ.):
- 12) Կուպրին.—«Յերկրի խորքերում», (մանկ.):
- 13) Դ. Ալայան.—Հեքիաթներ (մանկ.).
- 14) Ռուդեն.—Պիոներ, պահպանիր առողջութիւնդ.
- 15) Խլերիկով.—Կարմրամորթները (մանկ.).
- 16) Ռիժկով.—Մատաղ պիոները.
- 17) Շուլցին.—Սոցիալական դատա. հիմն. հարցերը.

W133

ԳԻՆԸ 35 ԿՈՎ.

891.71  
4-95